

ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ռեկտոր
Գայանե Գասպարյան

Երևան 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ	3
2. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ	22
3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ	37
4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	63
5. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ	68
6. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ, ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	75
7. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿՑԱՆՔ	88
8. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	97
9. 2016 Թ. ԱՆԵԼԻՔՆԵՐ	98
10. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	100

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

1. 2015թ. ապրիլի 11-ին կայացել է Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի հավատարմագրման հանձնաժողովի նիստը, որի ընթացքում ամփոփվել են ԵՊԼՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման ամբողջական գործընթացի արդյունքները: Հավատարմագրման հանձնաժողովի որոշմամբ ԵՊԼՀ-ին շնորհվել է ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով /Հավելված 1/:

2. 2015-2016 ուստարում ԵՊԼՀ-ն իրականացրել է ընդունելություն 2014-2015 ուստարում լիցենզավորված նոր մասնագիտություններով՝

բակալավրիատ /առկա ուսուցում/՝

1) 030200 – Քաղաքագիտություն

2) 100100 – Զբոսաշրջություն

3) 030600 – Լրագրություն

մագիստրատուրա /առկա ուսուցում/՝

1) 100100 – Զբոսաշրջություն

բակալավրիատ /հեռակա ուսուցում/՝

1) 100100 – Զբոսաշրջություն

2) 030600 – Լրագրություն

մագիստրատուրա /հեռակա ուսուցում/՝

1) 100100 – Զբոսաշրջություն

2) 032400 – Ռուսաց լեզու և գրականություն /մանկավարժություն

Ինչպես նաև թարգմանչական բաժնում ընդունելություն է իրականացվել չինարեն, կորեերեն և իսպաներեն լեզուներով /Հավելված 2/:

3. Մշակվել և հաստատվել է ԵՊԼՀ ուսանողի ուղեցույցը /ԵՊԼՀ-ի գիտխորհրդի 29.09.2015 N 2 նիստի որոշում, (Հավելված 3)/:

4. Մշակվել և հաստատվել է բակալավրիատի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման և գնահատման չափանիշների նոր ձևաչափը /ԵՊԼՀ ռեկտորատի նիստի 25.12.2015թ. N 18 նիստի որոշում(Հավելված 4)/:

5. ԵՊԼՀ մասնակցել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1038-Ն և 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N 1191-Ն որոշումներով հաստատված բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների (դասիչների) և որակավորումների համապատասխանեցման ցանկի մշակմանը (Հավելված 5):

6. ԵՊԼՀ Լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնը վերանվանվել է «Համալսարանական շարունակական կրթության կենտրոն» /ԵՊԼՀ-ի գիտխորհրդի 22.04.2015 N 7 նիստի որոշում (Հավելված 6)/:

Հարատև կրթության ժամանակակից համակարգում համալսարանական սեկտորը ներկայանում է հիմնականում University Continuing Education անվանմամբ, ինչը

պայմանավորված է կոմպետենցիաների շարունակական զարգացման խնդրի լուծման մեթոդաբանությամբ, ըստ որի կյանքի ցանկացած փուլում հմտությունները զարգացնելու և/կամ նոր կարողություններ ձեռք բերելու ընթացքը հնարավոր չէ հստակ բաժանել «հիմնականի» և «լրացուցիչի»: Այդ իսկ պատճառով նախկին Լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնի վերանվանումը կապված է կենտրոնի խնդիրների հստակեցման և միջազգային իրողություններին ու զարգացումներին համապատասխանեցման անհրաժեշտության հետ:

7. 2014-2015 ուսումնական տարվա ուսանողների արտադրական և մանկավարժական պրակտիկան անց է կացվել տարբեր կազմակերպություններում անվճար հիմունքներով: Ինչպես նաև ԵՊԼՀ ուսանողները ներգրավված են եղել կամավորական աշխատանքներում որպես ջոկատավարներ (*Հավելված 7*)::

8. 2014-2015 ուսումնական տարում հեռակա ուսուցման ֆակուլտետի առաջին շրջանավարտները նույնպես անց են կացրել իրենց արտադրական և մանկավարժական պրակտիկան դպրոցներում և տարբեր կազմակերպություններում պատշաճ մակարդակով (*Հավելված 7*)::

9. 2015թ. սեպտեմբերի 30-ին ԵՊԼՀ-ում բացվեց չինարեն լեզվի լինգաֆոնային լաբորատորիան:

10. 2015-2016 ուստարում՝ դեկտեմբերի առաջին տասնօրյակի ընթացքում կազմակերպվել են հանդիպումներ ռեկտորի հետ ԵՊԼՀ-ի ավարտական կուրսերի ուսանողների հետ՝ ամփոփիչ ատեստավորման քննությունների վերաբերյալ:

11. 2015-2016 ուստարում իրականացվել է սիրիահայ ուսանողների տեղափոխումը ԵՊԼՀ-ի 4-րդ կուրս՝ ուսումը շարունակելու, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման քննությունները հանձնելուց հետո համապատասխան որակավորում ստանալու նպատակով:

ԵՊԼՀ-ն շարունակում է ակտիվ համագործակցություն արտերկրի կրթական կառույցների հետ՝

- ԵՊԼՀ-ն Գիտության և Մշակույթի Ռուսական Կենտրոնի հետ համատեղ 2015թ. դեկտեմբերին հայաստանյան դպրոցների ուսերենի ուսուցիչների համար կազմակերպել և անցկացրել է «Современные концепции преподавания русского языка» խորագրով վերապատրաստման դասընթացներ, որի ավարտին մասնակիցներին շնորհվել են համապատասխան վկայագրեր:
- ԵՊԼՀ-ն 2015թ. Հոկտեմբերի 14-15 Սրբաբուրգում մնասնակցել է միջկառավարական ժողովին «Լեզվի չափումը բոլոր առարկաների համար. Անաչառությունն ու որակը կրթության մեջ» խորագրով: Կոնֆերանսում ներգրավված էին բոլոր նրանք, ովքեր պատասխանատու են ուսումնական պլանների

ստեղծման և ուսուցիչների համար վերապատրաստումներ կազմակերպելու գործընթացում:

- ԵՊԼՀ-ի Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն ֆակուլտետի և **Բեռլինի Հումբոլդի համալսարանի** Եվրոպական ազգաբանություն բաժնի միջև 01.03.2011թ. կնքվել է համագործակցության պայմանագիր (*Հավելված 8*):
- ԵՊԼՀ-ի Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն ֆակուլտետի և **Կաունասի Մագնուս համալսարանի** Քաղաքագիտության և դիվանագիտության ֆակուլտետի միջև 09.11.2009թ. կնքվել է համագործակցության պայմանագիր (*Հավելված 9*):
- ԵՊԼՀ-ի Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն ֆակուլտետի և **Շվեյցարիայի Ֆրայբուրգ համալսարանի** միջև 15.09.2011թ. կնքվել է համագործակցության պայմանագիր: Անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոնը համագործակցում է “Fulbright” ծրագրի հետ (ներկայացուցիչ՝ Զիա Դավիդյան) (*Հավելված 10*):
- ԵՊԼՀ-ի և Վերոնայի համալսարանի միջև պայմանագիրը կնքվել է 13.05.2014թ. գիտական և մշակութային ոլորտներում համագործակցելու նպատակով (*Հավելված 11*):

ԴԱԱԴ-ի աջակցությամբ 2015 թ. իրականացվել են հետևյալ ծրագրերը.

1. 07-11.10. 2015թ. Վ. Բրյուսովի անվան համալսարանում միջազգային գիտական սեմինար՝ «Առաջին Համաշխարհային պատերազմի մշակութային պատմությունը և հայերի ցեղասպանությունը» խորագրով
2. 17.-28.08.2015թ. Վ. Բրյուսովի անվան համալսարանում միջազգային ամառային դպրոց
3. ամբիոնի դոցենտ՝ Բ.Գ.Թ. Ելենա Էթարյանը DAAD-ի կարճաժամկետ հետազոտական կրթաթոշակով Դյուսելդորֆի համալսարան
4. 14.-16.10.2015թ. ամբիոնի դոցենտ՝ Բ.Գ.Թ. Ելենա Էթարյանը Թիֆլիսի Ի. Ջավախիշվիլու անվ. Համալսարանում DAAD-ի նախկին կրթաթոշակակիրների համար նախատեսված «Տեքստի և խոսույթի վերլուծության տեսությունը և պրակտիկան» խորագրով միջազգային կոնֆերանսին հետևյալ զեկույցով. «Խոսույթի պրոբլեմատիկան Գ. Գրասի *Անեզր դաշտ վեպում*»
5. ամբիոնի ավագ դասախոս՝ Բ.Գ.Թ. Գայանե Գինոյանը DAAD-ի կարճաժամկետ հետազոտական կրթաթոշակով Դյուսելդորֆի համալսարան
6. գերմաներեն բաժնի 5 և գերմաներենը որպես 2-րդ օտար լեզու սովորող 1 ուսանող սատացել են երկշաբաթյա ամառային դպրոցի կրթաթոշակ

7. ԿԱԱԴ –ի աջակցությամբ 2015թ. հոկտեմբերին ԵՊԼՀ-ում տեղի է ունեցել ԿԱԱԴ կրթաթոշակակիրների միջազգային գիտաժողով Գիտությունը և կրոնը. KAAD-են և հետազոտության նոր հեռանկարները» խորագրով
8. Է. Ղազարյան -2015թ. հունվարին KAAD – ի կարճաժամկետ հետազոտական կրթաթոշակ, Էսսեն-Դիսբուրգի համալսարան
9. ամբիոնի ավագ դասախոս, հայցորդ Սվետլանա Վարդանյանը ստացել է Սաքսոնիա-Անհալթի 1-ամյա հետազոտական կրթաթոշակը և ներկայումս գտնվում է Հալլե-Վիթենբերգի Մարտին-Լութերի համալսարանում
10. Հայկ Հովսեփյան – մագիստրատուրայի թարգմանչական գործ բաժնի ուսանող, 2015թ. հոկտեմբեր-փետրվար Գերմանիստիկայի ինստիտուտների համագործակցության շրջանակներում գերմաներենի ամբիոնի միջնորդությամբ Կրոնիմետ-Մայնինգ ընկերության կողմից կիսամյակային կրթաթոշակով գտնվում է Հալլե-Վիթենբերգի Հալլե-Վիթենբերգի համալսարանում
11. 27.04.2015 թ. Գյոթեի ինստիտուտի հետ համատեղ Վ. Բրյուսովի անվան համալսարանում Օհայո համալսարանի պրոֆ. Բերնհարդ Մալկմուսի ղեկույցը «Հայաստանը և նրա ճակատագիրը Ֆրանց Վերֆելի և Էդգար Հիլգենրաթի ստեղծագործություններում» թեմայով
12. 26.-27.09.2015 թ. «Գերմաներենի ուսուցչի օրը Հայաստանում» կոնֆերանս ամբիոնի մասնակցությամբ
13. 18.-20.05.2015թ. Ե. Էթարյան, մասնակցություն /վերապատրաստում/ միջազգային սեմինարի Մինսկում՝ «Մասնագիտական գերմաներենը գերմաներենի դասընթացներում» խորագրով
14. Ամբիոնի ավագ դասախոս, բ.գ.թ. Կարինե Հովհաննիսյան – Ավստրիայի կրթության նախարարության <Մշակույթ և Լեզու> կրթաթոշակ
15. Ամբիոնի դասախոս Մարինա Մինասյան – Ավստրիայի կրթության նախարարության «Մշակույթ և Լեզու» կրթաթոշակ
16. 06.–08.04.2015թ. գերմաներենի ուսուցիչների ռեզիդնալ համաժողով՝ «Բազմալեզվությունը ինստիտուցիոնալ համատեքստում. Գերմաներենը՝ որպես երրորդ օտար լեզու» խորագրով
17. 24.-28.08.2015 թ. ամբիոնի դոցենտ՝ բ.գ.թ. Ելենա Էթարյանը Շանհայի Թոնցիի համալսարանում «Գերմանագետների միջազգային միության» համաշխարհային համաժողովում հանդես է եկել «Ժամանակի քննադատությունը Գ. Գրասի գործերում» զեկույցով

18. 2014-2015 ուս. Տարում ԵՊԼՀ-ի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Լուսինե Աբգարյանը մեկ ուսումնական տարով մեկնել է ուսանելու Փարիզ – Սորբոն համալսարանում:

19. 2015-2016 ուս. Տարում ԵՊԼՀ-ի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ներքոհիշյալ ուսանողները մեկ ուսումնական տարով մեկնել են ուսանելու Փարիզ – Սորբոն համալսարանում:

Հայկուհի Գզիրյանց, Արփիկե Հարությունյան, Մարիամ Հովհաննիսյան

ԵՊԼՀ-ում ուսանողների վերաբերյալ վիճակագրություն.

	Վճարովի	Անվճար	Ընդհանուր
ՌՕԼՄՀՖ /բակ./	110	23	133
ԹՄՀՖ /բակ./	1198	76	1274
ՕԼՖ /բակ./	889	106	995
Հեռակա /բակ./	272	3	275
Մագիստր. /առկա+հեռ./	477	142	619
Ասպիրանտ /առկա+հեռ./, հայցորդ	101	32	133
<i>Ընդամենը 2015</i>	<i>3047</i>	<i>382</i>	<i>3429</i>

<i>ՌՕԼՄՀՖ (բակ.)</i> Ընդհանուր՝ 133 Անվճար՝ 23 Վճարովի՝ 110	<i>ԹՄՀՖ (բակ.)</i> Ընդհանուր՝ 1274 Անվճար՝ 76 Վճարովի՝ 1198	<i>ՕԼՖ (բակ.)</i> Ընդհանուր՝ 995 Անվճար՝ 106 Վճարովի՝ 889	<i>Ընդամենը՝ 2015թ.</i> Ընդհանուր՝ 3429 Անվճար՝ 382 Վճարովի՝ 3047
<i>Հեռակա (բակ.)</i> Ընդհանուր՝ 275 Անվճար՝ 3 Վճարովի՝ 272	<i>Մագիստրատուրա</i> Ընդհանուր՝ 619 Անվճար՝ 142 Վճարովի՝ 477	<i>Ասպիրանտուրա</i> Ընդհանուր՝ 133 Անվճար՝ 32 Վճարովի՝ 101	

ԵՊՀ բակալավրիատի ուսանողների քանակը ըստ մասնագիտությունների /տեղա ուսուցում/

Մասնագիտություն	Մասնագիտացում	Կուրս				Ընդամենը
		1	2	3	4	
Լեզվաբանություն	Անգլ, ֆր., գերմ., իտ. Ռուս	83	85	112	212	492
Օտար լեզու և գրականություն	Մանկավարժություն Բանասիրություն	143	98	149	112	502
Ռուսաց լեզու և գրականություն	Բանասիրություն	7	12	3	5	27
Լեզվաբանություն և ՄՄՀ	Երկրագիտություն Ռ.լ.	4	-	18	25	47
Լեզվաբանություն և ՄՄՀ	Քաղաքագիտություն Միջազգային լրագրություն Միջազգային տուրիզմ Երկրագիտություն Հոգեբանություն	174	210	213	206	803
Թարգմանչական գործ	Ռուս-անգլ-հայ	36	35	22	24	117
Թարգմանչական գործ	Անգլ-հայ	87	73	86	96	342
Թարգմանչական գործ	Չին-հայ	5	8	-	-	13
Թարգմանչական գործ	Կորեերեն-հայ	5	6	-	-	11
Թարգմանչական գործ	Իտալերեն-հայ	-	3	-	-	3
Թարգմանչական գործ	Ֆրանսերեն-հայ	2	8	5	-	15
Թարգմանչական գործ	գերմաներեն-հայ	6	10	4	-	20
Թարգմանչական գործ	Իսպաներեն և հայ	2	-	-	-	2
Սերվիս		8	-	-	-	8
Ընդամենը		562	548	612	680	2402

**Առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելությունը
ԵՊՀ-ում 2015-2016 ուս. Տարում կատարվել է 11 մասնագիտություններով
/25 մասնագիտացումներով/**

Մասնագիտության անվանումը	Մասնագիտացումը
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	Լեզվաբանություն և տեղեկատվ. տեխնոլոգիաներ
	Լեզվաբանություն-տիպաբանություն /անգլերեն/
	Լեզվաբանություն - տիպաբանություն /ֆրանս./
	Լեզվաբանություն – տիպաբանություն /գերման./
	Լեզվաբանություն – տիպաբանություն /իտալերեն/
ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԳՈՐԾ	Երկլեզու թարգմանիչներ /անգլերեն-հայերեն/
	Երկլեզու թարգմանիչներ /ֆրանսերեն-հայերեն/ մասնագիտական թարգմանություն և ծրագրերի կառավարում
	Երկլեզու թարգմանիչներ /գերմաներեն-հայերեն/
	Եռալեզու թարգմանիչներ /ռուս. - անգլ. - հայ./
ՕՏԱՐ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	Բանասիրություն
	Բանասիրություն /ֆր.լեզվով/ ֆրանսերեն լեզու, գրականություն և քաղաքակրթություն
	Մանկավարժություն
	Մանկավարժություն /ֆր.լեզվով/ ֆրանսերենի դասավանդման մեթոդաբանություն և կրթական նորագույն տեխնոլոգիաներ
	Մանկավարժական հոգեբանություն
ՌՈՒՍԱՅ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	Բանասիրություն /ռուսերեն/
	Մանկավարժություն /ռուսերենը որպես օտար լեզու /
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻՋՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆ	Միջազգային տուրիզմ
	Տեղեկատվություն և հանրային հաղորդակց. տեխնոլոգ. (PR)
	Ռուսաց լեզու և միջմշակութային հաղորդակցություն
ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	Միջազգային լրագրություն
ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	Կրթության կառավարում
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Միջազգային հարաբերություններ
ԵՎՐՈՊԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Եվրոպագիտություն
ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Քաղաքագիտություն
ՍԵՐՎԻՍ	Միջազգային տուրիզմ

ԵՊԼՀ մագիստրատուրայի ուսանողների քանակն ըստ մասնագիտությունների /առկա ուսուցում/.

Մասնագիտության անվանումը	Մասնագիտացումը	2015-2016 ուստարի				Ընդամենը
		II կուրս		I կուրս		
		Անվճ.	Վճ.	Անվճ.	Վճ.	
ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Քաղաքագիտություն	3	-	4	-	7
ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	Միջազգային լրագրություն	1	4	-	-	5
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Միջազգային հարաբերություններ	3	13	2	2	20
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	Լեզվաբանություն և տեղեկատվ. տեխնոլոգիաներ	8	1	7	-	16
	Լեզվաբ.-տիպաբանություն /անգլերեն/	5	-	2	-	7
	Լեզվաբանություն - տիպաբանություն /ֆրանս./	2	-	-	-	2
	Լեզվաբանություն – տիպաբանություն /գերման./	-	-	-	-	-
	Լեզվաբանություն – տիպաբանություն /իտալ./	1	2	3	-	6
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻՋՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ	Միջազգային տուրիզմ	14	19	3	5	41
	Տեղեկատվություն և հանրային հաղորդակց. տեխնոլոգիաներ (PR)	6	14	6	4	30
	Ռուսաց լեզու և միջմշակ. հաղորդակցություն	2	2	2	-	6

ՕՏԱՐ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	Բանասիրություն	5	1	2	1	9
	Բանասիր./ֆր.լեզու, գրակ. և քաղաք./	2	-	2	-	4
	Մանկավարժություն	5	16	7	3	31
	Մանկավարժություն /ֆրանսերենի դաս. մեթոդ. և կրթ. նոր տեխնոլոգ./	-	-	-	-	-
	Մանկավարժական հոգեբանություն	1	4	-	-	5
ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	Կրթության կառավարում	-	17	-	4	21
ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԳՈՐԾ	Երկլեզու թարգմանիչներ /անգլերեն-հայերեն/	6	16	4	1	27
	Երկլեզու թարգմանիչներ /ֆրանսերեն-հայերեն/	2	3	1	2	8
	Երկլեզու թարգմանիչներ /գերմաներեն-հայերեն/	1	3	1	-	5
	Եռալեզու թարգմանիչներ /ռուսերեն – անգլերեն-հայերեն/	-	7	2	-	9
ՌՈՒՄԱՅ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	Բանասիրություն /ռուսերեն/	2	1	1	-	4
	Մանկավարժություն /ռուսերենը որպես օտար լեզու/	3	2	4	-	9
ԵՎՐՈՊԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Եվրոպագիտություն	3	2	2	-	7
ՍԵՐՎԻՍ		-	-	10	-	10
Ընդամենը ' 		75	127	65	22	289

ԵՊԼՀ բակալավրիատի ուսանողների քանակը ըստ մասնագիտությունների /հեռակա ուսուցում/

Մասնագիտության անվանումը	Մասնագիտացումը	Կուրս					Ընդամենը
		1	2	3	4	5	
Օտար լեզու և գրականություն	Մանկավարժություն	18	29	49	-	-	96
Ռուսաց լեզու և գրականություն	Մանկավարժություն /բանասիրություն	7	5	10	-	-	22
Լեզվաբանություն և ՄՄՀ	Միջազգային տուրիզմ	35	40	33	-	-	108
	Միջազգային լրագրություն	2	11	5	-	-	18
Լեզվաբանություն	Լեզվաբանություն /անգլերեն, ֆր., գերմ./	21	10	-	-	-	31
Ընդամենը		83	95	97	-	-	275

ԵՊԼՀ մագիստրատուրայի ուսանողների քանակը ըստ մասնագիտությունների /հեռակա ուսուցում/

Մասնագիտության անվանումը	Մասնագիտացումը	Ուստարի						Ընդամենը
		II կուրս		I կուրս		ավարտողներ		
		Անվճ.	Վճ.	Անվճ.	Վճ.	Անվճ.	Վճ.	
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ	Միջազգային տուրիզմ	-	50	-	6	-	38	94
	Տեղեկատվություն և հանրային հաղորդակց. տեխնոլոգ. (PR)	-	21	-	3	1	20	45
ՕՏԱՐ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	Մանկավարժություն /անգլ./	1	35	-	23	-	41	100
	Մանկավարժություն /ֆրանս./	-	1	-	3	-	5	9
	Մանկավարժություն /գերմ./	-	6	-	2	-	-	8
ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	Միջազգային լրագրություն	-	-	-	-	-	4	4

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	Կրթության կառավարում և սլանավորում	-	25	-	11	-	25	61
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	Լեզվաբանություն /Տեղեկատվական Տեխնոլոգիաներ/	-	4	-	-	-	-	4
ՌՈՒՍ.ԼԵԶՈՒ և ԳՐԱԿ.		-	-	-	5	-	-	5
ԸՆԴԱՄԵՆԸ		1	142	-	53	1	133	330

**ԵՊԼՀ-ի 2014-2015 ուստարվա ձմեռային և գարնանային քննաշրջանների
առաջադիմություն**

Ֆակուլտետը	Ձմեռային քննաշրջանի առաջադիմությունը	Գարնանային քննաշրջանի առաջադիմությունը
ՌՕԼՍՀՖ	66,6%	55,7%
ԹՍՀՖ	73,4%	68,8%
ՕԼՖ	55,8%	61,3%
Մագիստրատուրա	79,4%	82% ⁹
Հեռակա /բակալավրիատ/	69,7%	55,7%
Հեռակա /մագիստրատուրա/	66,6%	74,2%
Ընդամենը	68,5%	66,2%

<u>ՌՕԼՍՀՖ</u> Ձմեռային քննաշրջան – 66,6 Գարնանային քննաշրջան – 55,7	<u>ԹՍՀՖ</u> Ձմեռային քննաշրջան – 73,4 Գարնանային քննաշրջան – 68,8
<u>ՕԼՖ</u> Ձմեռային քննաշրջան – 55,8 Գարնանային քննաշրջան – 61,3	<u>Մագիստրատուրա</u> Ձմեռային քննաշրջան – 79,4 Գարնանային քննաշրջան – 82%
<u>ՀԵՌԱԿԱ/բակ./</u> Ձմեռային քննաշրջան – 69,7 Գարնանային քննաշրջան – 55,7	<u>ՀԵՌԱԿԱ/մագ./</u> Ձմեռային քննաշրջան – 66,6 Գարնանային քննաշրջան – 74,2
<u>Արդյունքում՝</u>	<i>Ձմեռային քննաշրջանի առաջադիմությունը կազմում է 68,5</i>
	<i>Գարնանային քննաշրջանի առաջադիմությունը կազմում է 66,2</i>

ԵՊԼՀ-ում սովորող արտասահմանցի ուսանողներ

ԵՊԼՀ-ում շարունակում են ուսանել սփյուռքահայ և արտասահմանցի ուսանող հետևյալ երկրներից.

Երկիրը	Ուսանողների թիվը
Հունաստան	1
Իրան	5
Վրաստան	15
Ռուսաստան	15
Թուրքմենստան	2
Ուկրաինա	2
Սիրիա	25
Կորեա	1
Սերբիա	1
Լիբանան	1
Հորդանան	1
Գերմ.Դաշն.	1
Աբխազիա	1
Կիպրոս	1
Ընդամենը՝	72

Համալսարանական շարունակական կրթության կենտրոնի հետ համատեղ՝

- ✓ 2014-2015 ուստարում ՀՇԿԿ-ն իրականացրել է նախապատրաստական դասընթացներ բուհ ընդունվողների համար, որոնց հաճախել է 5 դիմորդ: Վերջիններս լավագույն ցուցանիշներով ընդունվել են հանրապետության տարբեր բուհեր:
- ✓ Կազմակերպվել են օտար լեզուների դասընթացներ, որոնց մասնակցել են՝
 - անգլերեն՝ 21 ունկնդիր
 - ֆրանսերեն՝ 12 ունկնդիր
 - գերմաներեն՝ 7 ունկնդիր
 - իտալերեն՝ 5 ունկնդիր
- ✓ Մշակվել և իրականացվել է նոր ծրագիր՝ «Հայերենը որպես օտար լեզու» ԵՊԼՀ-ում կամավորական ծրագրով գտնվող լեհ և իտալացի ուսանողների համար:

- ✓ ՀՀԿ կենտրոնը մասնակցել է Հայաստանում Եվրամիության Պատվիրակության կողմից կազմակերպված մրցույթին և ստացել ռուսաց լեցվի դասընթացների կազմակերպման և իրականացման իրավունք ԵՄ Պատվիրակության աշխատակազմի համար: 2015-2016 ուսումնական տարում ՀՀԿԿ-ն սկսել է իրականացնել նշված դասընթացը 4 լեզվական մակարդակներով: ԵՄ-ի հետ տարվում են բանակցություններ նաև հաջորդ ուստարվա դասընթացների կազմակերպման համար:
- ✓ Շարունակվել է ՀՀԿ կենտրոնի՝ Տեմպուսի SSRULLI ծրագրի շրջանակներում կենտրոնի մեթոդական, կազմակերպական, նյութական վերազինման գործընթացը:
- ✓ 2014 թ. դեկտեմբերին հաստատվել է Շարունակական կրթության համալսարանական ռազմավարական պլանը:
- ✓ Կենտրոնի աշխատակիցները և դասընթացներ մշակողները մասնակցել են մի շարք վրապատրաստումների, որոնք վարել են համալսարանական շարունակական կրթության առաջատար մասնագետները Գրացի, Համբուրգի և Տալլինի համալսարաններին:
- ✓ Արդյունավետ ուսուցում իրականացնելու համար ՀՀԿ-ն ստացել է 6 դյուրակիր համակարգիչ: Ընթացքում է այլ անհրաժեշտ սարքավորումների գնումը:
- ✓ Պատրաստվել և դեկտեմբերի մեկից գործարկման փուլ են մտնում շարունակական կրթության երեք դասընթաց, որոնք կազմվելու են կենտրոնում իրականացվող ծրագրերի առանցքը՝ «Մարդկային ռեսուրսների կառավարումը բարձրագույն կրթության մեջ» բաց համալսարանական դասընթացը՝ կառուցված ժամանակակից ՏՀՏ-ների հենքով, «Տեղեկատվական տեխնոլոգիաները կրթության մեջ» մասնագիտական վերապատրաստման դասընթացը, ապիրանտներին և հայցորդներին ուղղված՝ ատենախոսական հետազոտությունների իրականացման խնդիրներին վերբերող գործնական սեմինարը:

ՊՐՈՑԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ

Անձնակազմ	ընդամենը	ունեն գիտ. Աստիճան		ունեն գիտ. Կոչում	
		Դոկտորի	թեկնածուի	պրոֆ.	Դոցենտի
<u>Հիմնական</u>					
Հաստիք	142	8.5	74.75	8.5	61.75
Անձ	164	9	87	9	67
<u>Համատեղությամբ</u>					
Հաստիք	19.5	1.25	9.5	0.75	4.5
Անձ	58	3	25	2	11
<u>Պայմանագրային</u>					
Հաստիք	84.5	1	29	1.25	12.75
Անձ	137	1	42	2	16
Ընդամենը հաստիք	246	10.75	113.25	10.5	79
Ընդամենը անձ	359	13	154	13	94

2014-2015 ուստարում ԵՊՀ-ում դասավանդող արտասահմանցի դասախոսներ

N	Ամբիոն	Ազգանուն Անուն Հայրանուն	Լեզու
1.	Եվրոպական և ասիական լեզ.ամբիոն	Հասեգավա Արիհիկո	ճապոներեն
		Աբդալլա Օսման Մերվաթ Գոմմա	արաբերեն
		Յանգ Մեյխուա	չինարեն
		Փակ Հի Սու	Կորեերեն
		Մոհամմադ Խոսրովի Մալեք	պարսկերեն
		Էպատով Մարիա	ռումիներեն
		Կավիտա Սինգհին	հնդկերեն
2.	Գերմաներենի ամբիոն	Ներենց Անգելա Պեշել	գերմաներեն
3.	Ռուսաց և սլավոնական լեզ.ամբիոն	Օստրովսկա Միխալինա Գրաժինա	լեհերեն
4.	Անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբ.	Ալլարդայա Դավիթ Գրեգոր	անգլ.բանավոր խոսք
		Բուկուշյան Նարինե Անդրանիկի	անգլ.բանավոր խոսք և գրավոր խոսք

		Քարայան Արմեն Դիլան	գրավոր խոսք և կամընտրական առարկաններ/
5.	<u>Անգլերենի բառագիտության և ոճաբանության ամբ.</u>	Խալաթյան Արփինե Գագիկի	անգլ.բառագիտության և ոճաբանություն
6.	<u>Յունեսկո-ի մարդու իրավունք., ժողովրդավարության և եվրոպագիտ.ամբ.</u>	Խվորոստյանկինա Աննա	միջազգ.իրավունք-մագիստ. Իրավունքի հիմունքներ-բակալավր

ԵՊԼՀ անձնակազմի վերաբերյալ վիճակագրություն

- 246 հաստիք միավոր դասախոսներ
- 103,75 հաստիք միավոր վարչական աշխատող
- 18,5 հաստիք միավոր ուսումնաօժանդակ անձնակազմ
- 56,25 հաստիք միավոր կրտսեր ծառայող

Համամասնորեն

- 1 դասախոս - 13 ուսանող (2014թ.-ին՝ 12)
- 1 դասախոս - 0.42 հաստիքային միավոր վարչական անձնակազմ (2014թ.-ին՝ 0.41)
- 1 դասախոս – 0.30 հաստիքային միավոր, ուսումնաօժանդակ և կրտսեր ծառայողական անձնակազմ (2014թ.-ին՝ 0.38)

2015թ. ԵՊԼՀ կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների վիճակագրություն

Համալսարանի գրասենյակի կողմից ընթացք է տրվել 1075 դիմումների: Աշխատողների աշխատանքային կարգապահության խախտումների դեպքերով կատարվել է 11 ուսումնասիրություն, որոնց արդյունքում ընդունվել են համապատասխան որոշումներ այդ թվում՝ հայտարարվել է 7 խիստ նկատողություն:

Համալսարանի կադրերի բաժնի կողմից կնքվել են 370 աշխատանքային պայմանագիր: Կազմվել է աշխատանքային պայմանագրի փոփոխման ավելի քան 279 համաձայնագրեր: Գրանցվել են 87 անաշխատունակության թերթիկներ: Աշխատողներին և ուսանողներին են տրամադրվել համալսարան մուտք ու ելքի 675 քարտեր: Կնքվել են 5 նյութական պատասխանատվության պայմանագրեր:

Կարիերայի կենտրոնի հետ համատեղ

2014թ. մայիս ամսին ՀՀ 9 պետական բուհերի Կարիերայի կենտրոնների միջև կնքվել է համագործակցության հուշագիր, որի շրջանակներում 2015թ. նոյեմբերի 11-ին Հայաստանի ազգային ագրարային համալսարանում անցկացվեց «Բուհից աշխատաշուկա՝ մեկ քայլ» խորագրով աշխատանքային տոնավաճառը, որին մասնակցում էր ավելի քան 100 գործատու Երևանից և ՀՀ մարզերից: Միջոցառումը կրելու է շարունակական բնույթ և յուրաքանչյուր տարի հյուրընկալվելու է գործընկեր բուհերից մեկում: Միջոցառման նպատակն էր ՀՀ բուհերի ուսանողներին և շրջանավարտներին ներկայացնել Երևանում և մարզերում գործող աշխատանքային գործակալությունների, պետական գերատեսչությունների, միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, դիվանագիտական, ինչպես նաև բիզնեսի և կրթական ոլորտի ներկայացուցչությունների կողմից առաջարկվող թափուր աշխատատեղերը, կրթական, երիտասարդական և կամավորական ծրագրերը, սեմինարները և դասընթացները ՀՀ-ում և արտերկրում, կրթաթոշակները և այլն: ԵՊԼՀ Կարիերայի կենտրոնը տոնավաճառին հանդես էր գալիս առանձին տաղավարով՝ ներկայացնելով կենտրոնի գործունեությունը, իրականացվող ծրագրերը և այլն:

2011թ.-ից կենտրոնի կողմից ԵՊԼՀ-ում իրականացվում է **EVS «Եվրոպական կամավորական ծառայություն»** ծրագիրը, որը ֆինանսավորվում է Եվրամիության «Երիտասարդությունը շարժման մեջ» ծրագրի կողմից: Ծրագրի շրջանակներում ԵՊԼՀ-ն եվրոպական երկրներից հյուրընկալում է կամավորներ, ովքեր կազմակերպում են համապատասխան լեզուների արտալսարանային ոչ ֆորմալ դասընթացներ ուսանողների, շրջանավարտների, աշխատակիցների համար՝ նախաձեռնելով ակումբներ, միջոցառումներ, ֆիլմերի դիտումներ և քննարկումներ: 2014-2015թթ. ԵՊԼՀ հյուրընկալել է 5 կամավոր՝

ա/ Անդրեա Փեսլ – Ավստրիա

բ/ Դոմինիկա Մալիկ – Լեհաստան

գ/ Ռաֆալ Քոչանովիչ – Լեհաստան

դ/ Ղոքսան Վախսման – Ֆրանսիա

ե/ Ջեսիքա Շոսինյո – Ֆրանսիա

2015-2016թթ. ԵՊԼՀ հյուրընկալել է 4 կամավոր՝

ա/ Դանիելա Ներեչովա – Սլովակիա

բ/ Ալեքսանդրա Իոնինո – Գերմանիա

գ/ Թիբո Վերվել – Ֆրանսիա

դ/ Սաբինա Մատիչեկ – Խորվաթիա

Կարիերայի կենտրոնի աջակցությամբ ԵՊԼՀ ուսանողները և շրջանավարտները EVS ծրագրի շրջանակներում մեկնում են եվրոպական տարբեր երկրներ՝ 2 շաբաթից մինչև 12 ամիս տևողությամբ կամավորական ծրագրին մասնակցելու նպատակով:

ա/ Անի Յենոքյան – Գերմանիա

բ/ Վանուհի Հոբոսյան – Իտալիա
գ/ Աննա Հայրապետյան – Լատվիա

ԵՊԼՀ-ի, Կարիերայի կենտրոնի և Վիվա Սել ՄՏՍ ընկերության համագործակցության արդյունքում 2014-2015 և 2015-2016 ուս. Տարիների համար ԵՊԼՀ թվով 18 ուսանող ընկերության կողմից ստացել են կրթաթոշակ:

2015թ.-ին անցկացվել է **«Բաց դռներ»** ծրագիրը, որի շրջանակներում ԵՊԼՀ-ն կազմակերպում է Երևանի և մարզերի ավագ դպրոցների աշակերտների այցելություն և շրջայց համալսարանում՝

ա/ 2015թ. նոյեմբեր – Աբովյանի 6 ավագ դպրոց

բ/ 2015թ. նոյեմբեր – Երևանի Գ. Վարդանյանի անվան թիվ 192 հիմնական դպրոց

գ/ 2015թ. նոյեմբեր – Երևանի Դ. Վարուժանի անվան թիվ 89 հիմնական դպրոց

դ/ 2015թ. նոյեմբեր – Երևանի Տ. Շևչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց

2014-2015 և 2015-2016 ուս. Տարիներում ԵՊԼՀ-ում շարունակվում է դասավանդվել **«Կարիերայի պլանավորում»** առարկան, որի նպատակն է ուսանողներին ներկայացնել աշխատաշուկան, պահանջները, աշխատաշուկա մուտք գործելու համար անհրաժեշտ հիմնական հմտությունները և այլն:

Առարկան կամընտրական է Օտար լեզուների ֆակուլտետի կրթական ծրագրերի 2-րդ կուրսում՝ ներառված Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի առարկայացանկում:

2013թ.-ից ԵՊԼՀ-ն ներգրավվել է Եվրոմիության կողմից ֆինանսավորվող **Էրասմուս Մունդուս /Erasmus Mundus/** ծրագրի շրջանակներում գործող երկու նախագծերում, որոնցից մեկը համակարգվում է Կարիերայի կենտրոնի կողմից: ***Education Force: During Mobility for EU-East Europe Cooperation (EFFORT)*** (www.erasmusmunduseffort.teithe.gr) ծրագիրը համակարգվում է Հունաստանի համալսարանի կողմից, որպես գործընկերներ ներգրավված են նաև Վրաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Մոլդովայի, Էստոնիայի, Պորտուգալիայի, Չեխիայի, Լեհաստանի, Լատվիայի, Ֆրանսիայի և Անգլիայի համալսարանները:

2014-2015 ուստարում բակալավրի և մագիստրատուրայի 5 ուսանողներ 10 և 20 ամիս ժամկետով ուսանել են վերոնշյալ երկրների գործընկեր համալսարաններում՝

ա/ Արմինե Պետրոսյան – մագիստրատուրա / Հունաստան

բ/ Արևիկ Հայրապետյան – մագիստրատուրա / Հունաստան

գ/ Աննա Սաֆյան – մագիստրատուրա / Չեխիա

դ/ Տաթևիկ Օհանյան – բակալավր / Լատվիա

ե/ Գոհար Հակոբյան – բակալավր / Լեհաստան

2015-2016 ուստարում բակալավրի 2 ուսանողներ 10 ամիս ժամկետով ուսանում են վերոնշյալ երկրների գործընկեր համալսարաններում՝

ա/ Մարիամ Երոյան – բակալավր / Լատվիա

բ/ Աննա Ավագյան – բակալավր / Հունաստան

գ/ Անի Հովսեփյան – հետազոտություն / Հունաստան

2015թ.-ին ԵՊԼՀ-ն ներգրավվել է Եվրոմիության կողմից ֆինանսավորվող **Էրասմուս Պլյուս /Erasmus+** ծրագրի շրջանակներում գործող **Կրեդիտային շարժունություն /Credit Mobility/** նախագծում՝ Լեհաստանի Լոդզի համալսարանի հետ համատեղ: Պայմանագրի համաձայն ԵՊԼՀ մագիստրատուրայի 1 ուսանող հնարավորություն է ստացել 1-ին կուրսի 2-րդ կիսամյակը ուսանել Լոդզի համալսարանում՝ ստանալով կրթաթոշակ ծրագրի շրջանակներում:

ԵՊԼՀ ուսանողների և շրջանավարտների հետ շարունակական կապը պահելու նպատակով 2010թ.-ից սկսած ԵՊԼՀ Կարիերայի կենտրոնը Շրջանավարտների միավորման հետ համատեղ իրականացնում է ԵՊԼՀ ուսանողների և շրջանավարտների տվյալների հավաքագրում, էլեկտրոնային բազայի ստեղծում և տվյալների պարբերաբար թարմացում:

ԵՊԼՀ ուսանողներին և շրջանավարտներին իրազեկելու և աշխատաշուկայում վերջիններիս մրցունակությունը բարձրացնելու նպատակով կենտրոնի կողմից կատարվում են հետևյալ գործողությունները՝

Էլեկտրոնային հասցեների ու խմբերի, ինչպես նաև ԵՊԼՀ կայքի, սոցիալական ցանցերի և բլոգի միջոցով ազգային, տարածաշրջանային և միջազգային կրթական ծրագրերի, թափուր աշխատատեղերի, սեմինարների, կամավորական ծրագրերի և դասընթացների վերաբերյալ տեղեկատվության տարածում ուսանողների և շրջանավարտների շրջանում:

- 2015թ. – Կարիերայի կենտրոնի և Շրջանավարտների միավորման համատեղ ֆեյսբուքյան պաշտոնական էջ և խումբ՝ 5792 անդամ,
- 2014թ. – Կարիերայի կենտրոնի և Շրջանավարտների միավորման Google խումբ՝ 8200 անդամ:

Ամենօրյա խորհրդատվություն՝ ինքնակենսագրական, մոտիվացիոն նամակ, երաշխավորագիր, ուղեկցող նամակ կազմելու, ինչպես նաև կրթական և կամավորական ծրագրերին դիմելու և աշխատանքային հարցազրույցի ներկայանալու վերաբերյալ:

Պետական, մասնավոր և հասարակական կազմակերպություններում ինթերնշիփի կազմակերպում, որոնց շրջանակներում ուսանողներն ու շրջանավարտները վճարովի կամ կամավոր հիմունքներով ոչ պարտադիր պրակտիկա են անցնում (Օռանժ Հայաստան, Վիվա Սել ՄՏՍ, Ինգո Արմենիա, Ռոստելեկոմ, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, Գործատուների հանրապետական միություն և այլն):

Պարբերաբար հանդիպումների կազմակերպում աշխատանքային գործակալությունների, պետական գերատեսչությունների, միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, դիվանագիտական, ինչպես նաև բիզնեսի և կրթական ոլորտի ներկայացուցիչների հետ, ովքեր ԵՊԼՀ

ուսանողներին և շրջանավարտներին ներկայացնում են կազմակերպությունների կողմից առաջարկվող թափուր աշխատատեղերը, կրթական, երիտասարդական և կամավորական ծրագրերը, սեմինարները և դասընթացները ՀՀ-ում և արտերկրում, կրթաթոշակները և այլն:

Սեմինարները անցկացվում են նաև ԵՊԼՀ-ում հատուկ հրավիրված մասնագետների կողմից (PR գործնական թրեյնինգներ, «Ինչպես կազմել մրցունակ ինքնակեսագրական և ինչպես ներկայանալ գործատուին» և այլն):

ԵՊԼՀ ուսանողները և շրջանավարտները Կարիերայի կենտրոնի աջակցությամբ մասնակցում են մի շարք կամավորական ծրագրերի:

Համագործակցության հուշագրերի կնքում և համատեղ ծրագրերի իրականացում կազմակերպությունների հետ /Կրթություն Հայաստան, Հայաստանի գործատուների հանրապետական միություն և այլն/:

Կարիերայի կենտրոնը պարբերաբար մասնակցում է կրթական տոնավաճառների, մասնագիտացված ցուցահանդեսների:

Կարիերայի կենտրոնը ԵՊԼՀ ուսանողներին, շրջանավարտներին և աշխատակիցներին տրամադրում է դասական համերգների, ներկայացումների հրավիրատուներ:

Շրջանավարտների միավորման հետ համատեղ 2015թ. հոկտեմբերի 7-ին Երևանի թիվ 192 հիմնական դպրոցը անվանակոչվել է ԵՊԼՀ շրջանավարտ, Սովետական Միության հերոս Գևորգ Վարդանյանի անունով:

- **ՈԱԱԿ-ի փորձագիտական կազմում ԵՊԼՀ ՈԱԿ-ի անձնակազմի ընդգրկվածությունը և հավատարմագրման գործընթացներում ակտիվ մասնակցության ապահովում.** Հաշվի առնելով ԵՊԼՀ ՈԱԿ-ի անձնակազմի մասնագիտական կարողություններն ու հմտությունները՝ ՈԱԱԿ-ը ԵՊԼՀ ՈԱԿ-ի աշխատակիցներին ներգրավել է հավատարմագրման ենթակա ուսումնական հաստատություններ հավատարմագրման նպատակով փորձաքննություն իրականացնող փորձագետների կազմում: Մասնագիտական կարողությունների հզորացման տեսանկյունից այս փաստը ՈԱԿ-ի անձնակազմի կարևորագույն ձեռքբերումներից է, և այս փորձը կարող է իր դրական ազդեցությունն ունենալ ԵՊԼՀ հետագա ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրումների գործընթացների և ինքնավերլուծությունների առավել արդյունավետ կազմակերպման և իրականացման համար:
- **ՈԱԱԿ-ի կողմից ԵՊԼՀ ուսանողների ներգրավում որակի ապահովմանն առնչվող գործընթացներում.** ՈԱԱԿ և ԵՊԼՀ ՈԱԿ շարունակական համագործակցությունը նպաստում է ԵՊԼՀ ուսանողների առավել ակտիվ ներգրավվածությանը որակի ապահովման խնդիրներին առնչվող հարցերում, ինչպես նաև ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվող և իրականացվող բազմաբնույթ միջոցառումներում: ԵՊԼՀ ուսանողների, մասնավորապես՝ «Հանրային կառավարում» մասնագիտությամբ մագիստրատուրայի ուսանողների դրսևորած ակտիվ մասնակցության շնորհիվ ուսանողներից երեքը ներգրավվել են ՈԱԱԿ-ի ուսանող-փորձագետների թիմում: Այս փաստը կարող է խթան հանդիսանալ ուսանողների իրազեկության բարձրացման համար, ինչպես նաև նախադրյալներ ստեղծել հետագայում ուսանողների զբաղունակության ապահովման համար:
- **ՈԱԱԿ և ԵՊԼՀ ՈԱԿ շարունակական համագործակցություն,** որի արդյունքում ՈԱԿ-ի անձնակազմը պարբերաբար մասնակցում է ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված սեմինարներին և միջոցառումներին՝ ընդլայնելով իր փորձառությունն ու մասնագիտական կարողությունները: Ստացված տեղեկատվությունն ու փորձը ԵՊԼՀ ՈԱԿ-ի անձնակազմը կիրառում է ԵՊԼՀ-ում՝ որակի մշակույթի շարունակական բարելավման նպատակով:
- **Իրազեկության բարձրացում և ՈԱԿ-ի անձնակազմի ու ՊԴ կազմի մասնագիտական կոմպետենցիաների զարգացում** ազգային և միջազգային մակարդակներում վերապատրաստումների և համաժողովների մասնակցության միջոցով:

2. ԵՊԼՀ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Հավատարմագրման գործընթացը, որն սկսվել էր դեռևս 2012թ.-ին ԵՊԼՀ ինքնավերլուծական զեկույցի կազմամբ, ընթացել է հետևյալ փուլերի հաջորդականությամբ.



- 2015թ. հուլիսի 31-ին ԵՊԼՀ ՈԱԿ-ը ՈԱԱԿ-ին է ներկայացրել ԵՊԼՀ-ին ինստիտուցիոնալ հավատարմագրում շնորհելու մասին ՈԱԱԿ-ի հավատարմագրման հանձնաժողովի 2015թ. ապրիլի 11-ի N 9 որոշման, ինչպես նաև փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ուղղությամբ ԵՊԼՀ-ի գործողությունների ծրագիրն ու համապատասխան ժամանակացույցը:

Առաջնորդվելով «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով՝ ԵՊԼՀ ՈԱԿ-ը երկու տարի անց ՈԱԱԿ-ին է ներկայացնելու գրավոր զեկույց տվյալ ժամանակահատվածում իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ ԵՊԼՀ ՈԱԿ-ը կազմակերպում և իրականացնում է իր գործունեությունն առավել համակարգված կերպով՝ պարբերաբար հավաքագրելով ԵՊԼՀ-ում կրթական և կազմակերպական բարեփոխումների ուղղությամբ իրականացվող միջոցառումների վերաբերյալ տեղեկություն և վերլուծություններ տարբեր ստորաբաժանումներից: Հավաքագրված տեղեկությունների այդ բազան հիմք է հանդիսանալու ՈԱԱԿ ներկայացվող զեկույց-հաշվետվությունների համար:

3. ԵՊԼՀ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հաշվի առնելով ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական հանձնաժողովի կողմից ներկայացված խորհրդատվությունները՝ ԵՊԼՀ ՈԱԿ-ը շարունակական աշխատանքներ է իրականացնում ԵՊԼՀ-ում որակի մշակույթի զարգացման ու տարածման, ինչպես նաև բուհի կատարողականի պարբերաբար գնահատման ուղղությամբ: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ԵՊԼՀ ՈԱԿ-ը մշակել է երկու հիմնարար փաստաթուղթ, որոնք կնպաստեն բուհի կատարողականի արդյունավետության բարձրացմանը

1. **Գործունեության առանցքային ցուցանիշները /ԳԱՑ/**
2. **ԵՊԼՀ ռիսկերի գնահատման տեղեկագիր**

ԵՊԼՀ ՈԱԿ-ը մշակել և ԵՊԼՀ բոլոր ստորաբաժանումների քննարկմանն է ներկայացրել **Գործունեության առանցքային ցուցանիշները /ԳԱՑ-KPI/**, որոնք հանդիսանում են բուհի գործունեության արդյունավետության գնահատման համապարփակ գործիք՝ ներառելով բուհի գործունեության բոլոր ոլորտները: ԳԱՑ-երի միջոցով կարելի է որոշել, թե բուհը որքան արդյունավետ է իրականացրել իր ռազմավարական նպատակները և խնդիրները

Արտաքին փորձագիտական կարծիք

ԳԱՑ-երի նախնական տարբերակը երկու անգամ ներկայացվել է միջազգային փորձագետների քննարկմանը


- ✓ **2015թ. հունիսի 10-ին** Տեմպուս GOVERN ծրագրի շրջանակներում Հայաստանի Ամերիկյան Համալսարանում տեղի ունեցած աշխատաժողովի ժամանակ, որտեղ Տեմպուս GOVERN ծրագրի միջազգային փորձագետներն ու տեղական հաստատությունների ներկայացուցիչները ներկայացրել են իրենց առաջարկություններն ու մեկնաբանությունները,
- ✓ **2015թ. հոկտեմբերի 7-ին** «Բրիտանական հորիզոնների» աջակցությամբ ԵՊԼՀ ժամանած Լոնդոնի Մետրոպոլիտան համալսարանի դոկտոր Պատրիկ Գրեյին, ով իր խորհրդատվություններն է ներկայացրել ԳԱՑ-երի արդյունավետ կիրառման վերաբերյալ:

Ներքին շահակիցների կարծիքներ

ԳԱՑ-երի նախնական տարբերակը ուղարկվել է ԵՊԼՀ բոլոր ստորաբաժանումներ քննարկման, և ստացված կարծիքներին ու դիտարկումներին համապատասխան փոփոխություններ են կատարվել ԳԱՑ-երում:


2015թ. հոկտեմբերի 27-ին ԵՊԼՀ ՈԱԿ- ղեկավարի կողմից ԳԱՑ-երը ներկայացվել են **ԵՊԼՀ Գիտական խորհրդի նիստին** և հաստատվել են:

ԵՊԼՀ ԳԱՑ-երը ընդգրկում են բուհի գործունեության 9 ոլորտներ՝



ԵՊԼՀ ՈԱԿ-ը մշակել է ԵՊԼՀ ռիսկերի գնահատման տեղեկագիրը, որը, համաձայնեցվել է ԵՊԼՀ ռեկտորի և ԵՊԼՀ ուսումնական գծով պրոռեկտորի հետ: ՀՀ ԿԳՆ աշխատակազմի ներքին աուդիտի վարչության 2016-2018թթ. Ռազմավարական ծրագրի մշակման և ռիսկերի գնահատման գործընթացի կազմակերպման նպատակով ԵՊԼՀ ռիսկերի տեղեկագիրը 22.10.2015թ.-ին ներկայացվել է ՀՀ ԿԳՆ:

Տեղեկագրում ներկայացվել են ԵՊԼՀ հավանական ռիսկերը, դրանց նկարագրությունն ու ռիսկերի ազդեցության գնահատականը: Հավանական ռիսկերը ներկայացվել են հետևյալ ուղղություններով՝



4. ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

ԵՊՀ ՈԱԿ-ն իր գործառնությունների շրջանակներում ձեռնամուխ է եղել նաև բարձրագույն կրթության կառավարման և որակի ապահովման ոլորտներում **գիտահետազոտական աշխատանքի** իրականացմանը՝

- համակարգելով *«Մարդկային ռեսուրսների կառավարումը բարձրագույն ուսումնական հաստատություններում»* ուսումնամեթոդական ձեռնարկի մշակման և փորձարկման աշխատանքները /2014թ սեպտեմբեր-մարտ/: Ուսումնամեթոդական ձեռնարկը նախատեսված է ուղղորդել բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում քաղաքականություն մշակողներին, ինչպես նաև կրթության ոլորտի շահագրգիռ կողմերին՝ մասնավորապես, բարձրագույն ուսումնական հաստատությունների ղեկավարներին և վարչական անձնակազմին, բարձրագույն կրթության համակարգում մարդկային ռեսուրսների կառավարման բարեփոխումներ իրականացնող պատասխանատու մասնագետներին և ուսումնառողներին: Ձեռնարկի կիրառման նպատակն է նպաստել բարձրագույն ուսումնական հաստատություններում մրցակցային առավելության դրսևորմանը՝ բարձրագույն մասնագիտական կրթության կառավարման ոլորտում առավել արագընթաց և արդյունավետ բարեփոխումներ իրականացնելու, ինչպես նաև կայուն զարգացումն ապահովելու տեսանկյունից:

Ձեռնարկը գրախոսվել է ՀՀ բուհերի և այլ կազմակերպությունների թվով վեց ներկայացուցիչների կողմից (հավելված 1): *«Մարդկային ռեսուրսների կառավարումը բարձրագույն ուսումնական հաստատություններում»* ուսումնամեթոդական ձեռնարկը բաժանվել է ԵՊՀ ներկայացուցիչներին, ՀՀ պետական և ոչ պետական բուհերի գրադարաններին, ինչպես նաև ձեռնարկի օրինակները տրամադրվել են Հայաստանի ազգային գրադարանին և Ավ. Բսահակյանի անվան կենտրոնական գրադարանին:

Ձեռնարկի վերաբերյալ տեղեկատվության լայնորեն տարածումը և շահակիցների շրջանում ձեռնարկի նկատմամբ մեծ հետաքրքրության խթանումն իրականացվել է կազմակերպված երկու մեծ միջոցառումների միջոցով՝

1. **2015թ. մարտի 27-ին** տեղի է ունեցել ձեռնարկի շնորհանդեսը, որին մասնակցել են ՀՀ 15 բուհերի (ներառյալ տարածաշրջանի՝ Վանաձորի, Գավառի և Գյումրիի բուհերի), Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի, Ուսանողական ազգային ասոցիացիայի, Համաշխարհային բանկի, Կրթության ազգային ինստիտուտի, ինչպես նաև ՀՀ Կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչներ: Շնորհանդեսի մասին տեղեկատվությունը լուսաբանվել է տարբեր լրատվամիջոցներով, որի շնորհիվ ձեռնարկը մեծ տարածում է ստացել և հետաքրքրություն է առաջացրել հանրության շրջանում:
 2. **2015թ. ապրիլի 25-26-ին** տեղի է ունեցել երկօրյա խորքային վերապատրաստում ձեռնարկում ներկայացված 8 գլուխների թեմաների վերաբերյալ: Վերապատրաստման համար որպես թիրախային խումբ ընտրվել են ԵՊԼՀ, ինչպես նաև ՀՀ այլ բուհերի թվով 40 ներկայացուցիչներ բուհերի կառուցվածքային տարբեր մակարդակներից՝ պրոռեկտորներ, դեկաններ, կադրերի կամ մարդկային ռեսուրսների բաժնի աշխատակիցներ, դասախոսներ, ուսանողներ: Վերապատրաստման ընթացքում տեսական նյութի ներկայացմանը զուգահեռ կազմակերպվել և իրականացվել են նաև թիմային գործնական աշխատանքներ, որոնց ընթացքում վեր են հանվել ՀՀ բուհերում առկա խնդիրները մարդկային ռեսուրսների և դասախոսական կազմի որակի առնչությամբ, և փորձ է արվել վերհանված խնդիրների ուղղությամբ ներկայացնել բարելավմանն ուղղված քայլեր:
- **Աշխատանքների գրախոսում:** ԵՊԼՀ ՈԱԿ-ը, շարունակաբար ուսումնասիրելով որակի ապահովման տարբեր մոդելներն ու մոտեցումները և ակտիվորեն մասնակցելով ոլորտային խնդիրների քննարկման նպատակով կազմակերպվող տարբեր միջոցառումների և հանդիպումների՝ դրսևորել է մասնագիտական այնպիսի որակական հատկանիշներ, որի արդյունքում արժանացել է գործընկերների վստահությանը: Որպես օրինակ կարելի է նշել հաշվետու ժամանակահատվածում ՈԱԿ-ին գրախոսման համար ուղարկված հետևյալ աշխատանքները, որոնք նույնպես համագործակցության շրջանակի ընդլայնման հնարավորություններ են՝
- ✓ *«Որակի ներքին ապահովման մոդելի մի քանի հարցերի շուրջ (Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի օրինակով)»* հոդված, որի հեղինակներն են Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի ՈԱԿ-ի տնօրեն Ն. Ավետիսյանն ու Մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոնի դասախոս Ա. Մուրադյանը,
 - ✓ *«Բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության գնահատումը հարցումային մեթոդի կիրառմամբ»* ուսումնական ձեռնարկ, որի հեղինակներն են ԵՊԼՀ տեղեկատվական կրթական և վեբ տեխնոլոգիաների բաժնի ղեկավար, դասախոս Ս. Առաքելյան, նույն բաժնի դոցենտ Ս. Թոքմանջյանը և ավագ դասախոսներ Յու. Ստակյանն ու Ա. Մարտիրոսյանը:

5. ՏԵՄՊՈՒՍ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԵՊԼՀ-ում համակարգելով Տեմպուսի ծրագրերի աշխատանքները՝ ՈԱԿ-ի անձնակազմը արձանագրել է մի շարք հմտությունների և կարողությունների ձեռքբերում ու ամրապնդում ծրագրերի շրջանակներում իրականացվող ուսումնասիրությունների, հետազոտությունների և մշակումների միջոցով, մասնավորապես՝

➤ ՏԵՄՊՈՒՍ GOVERN



- ✓ ՈԱԿ-ի անձնակազմը հանդիսանում է Տեմպուս GOVERN ծրագրի այն աշխատանքային խմբի համակարգող, որը ծրագրի շրջանակներում ներկայումս զբաղվում է ՀՀ բուհերում կրեդիտային համակարգի կիրառման ուսումնասիրությամբ՝ համադրելով և վերլուծելով ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից մշակված օրինակելի կարգերը և բուհերում կրեդիտային համակարգին առնչվող ներքին փաստաթղթերը: Աշխատանքային խումբը, որը բաղկացած է Տեմպուս GOVERN ծրագրում ներգրավված հաստատությունների ներկայացուցիչներից, ղեկավարում և համակարգում է ՈԱԿ-ի ղեկավարը:
- ✓ Տեմպուս GOVERN ծրագրի շրջանակներում ԵՊԼՀ ՈԱԿ-ը ներկայացրել է իր կողմից մշակված ԵՊԼՀ ԳԱՅ-երը, որոնց վերաբերյալ ծրագրում ներգրավված միջազգային փորձագետները ներկայացրել են իրենց խորհրդատվություններն ու առաջարկությունները:
- ✓ ՈԱԿ-ի անձնակազմը թարգմանել և խմբագրել է Տեմպուս GOVERN ծրագրի շրջանակներում միջազգային փորձագետների կողմից կազմված GOVERN ուղեցույցը /training kit/: GOVERN ուղեցույցը հիմք է հանդիսանալու ծրագրում ներգրավված հաստատություններում կառավարմանն ու որակի ապահովմանն ուղղված աշխատանքների բարելավման համար:
- ✓ ՈԱԿ-ը, համակարգելով Տեմպուս GOVERN ԵՊԼՀ աշխատանքային խումբը, նախապատրաստական աշխատանքներ է իրականացնում Տեմպուս GOVERN ծրագրի շրջանակներում ԵՊԼՀ-ի արտաքին գնահատման համար անհրաժեշտ վերլուծությունների իրականացման և փաստաթղթերի վերանայման ուղղությամբ:

➤ ՏԵՄՊՈՒՍ ARMENQA



- ✓ ՈԱԿ-ը հանդես է եկել որպես Տեմպուս ARMENQA ծրագրի շրջանակներում ՀՀ ՈԱԾ-ի վերամշակման աշխատանքային խմբի անդամ, ինչպես նաև մասնակցել է այդ ուղղությամբ կազմակերպված իրազեկության բարձրացմանն ուղղված աշխատանքներին:
- ✓ ՈԱԿ-ի անձնակազմը հանդիսանում է Տեմպուս ARMENQA ծրագրի շրջանակներում կազմված աշխատանքային խմբի համակարգող, որի շրջանակներում մշակվել է ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակին բարձրագույն

կրթության որակավորումների համապատասխանեցման չափանիշներ և ընթացակարգ: ՈԱԿ-ի ղեկավարը հանդիսանում է նշված աշխատանքային խմբի ղեկավար:

- ✓ ՈԱԿ-ի ղեկավարը ներգրավված է Մեկտորալ որակավորումների շրջանակի մշակման աշխատանքներում: Ներկայումս ընտրվել են հինգ ոլորտներ, որոնց ուղղությամբ արդեն մշակվել են ոլորտային որակավորումների շրջանակներ: Այդ ոլորտներն են՝

1. Կրթություն
2. Գյուղատնտեսություն
3. Իրավաբանություն
4. Շինարարություն
5. Ֆիզիկա

➤ **ՏԵՄՊՈՒՍ ALIGN**



- ✓ ՈԱԿ-ի անձնակազմը հանդիսանում է Տեմպուս ALIGN ծրագրում ներգրավված ՀՀ բուհերի և կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված ազգային թիմի անդամ, որի շրջանակներում մշակվել է համապարփակ փաստաթուղթ, որը ծառայելու է որպես ուղեցույց կրթական ծրագրերը Որակավորումների ազգային շրջանակին համապատասխանեցնելու համար:
- ✓ ԵՊՀ-ը ՈԱԿ-ի ղեկավարը Տեմպուս ALIGN ծրագրի շրջանակներում «ՀՀ Որակավորումների ազգային շրջանակի մշակումը, վերանայումն ու առաջընթացը» թեմայով ելույթ է ունեցել 2015թ. օգոստոսի 25-27-ը ՈԱԿ-ում կազմակերպված միջոցառման ընթացքում Տեմպուս ALIGN գործընկեր Գերմանիայում բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների կենտրոնական և արևելյան Եվրոպայի ցանցի (CEENQA) ներկայացուցիչների մասնակցությամբ:
- ✓ ՈԱԿ-ը, Տեմպուս ALIGN ԵՊՀ աշխատանքային խմբի հետ համատեղ, իրականացրել է վերապատրաստումներ ԵՊՀ ամբիոնների վարիչների և դեկանների հետ կրթական ծրագրերը ՈԱԿ-ին համապատասխանեցնելու համար առաջարկվող մոդելների և մոտեցումների ներկայացման և քննարկման նպատակով:

➤ **ՏԵՄՊՈՒՍ**
SSRULLI



Հոկտեմբերի 4	Դիջիթալ միջազգային ցուցահանդեսի շրջանակում՝ Դիջի լայֆ շարքի սեմինար-շնորհանդես «Ինքնագնահատման, բացահայտման, ներդաշնակեցման, կառավարման, զարգացման, կատարելագործման, մեթոդաբանության հաղորդում և հմտությունների ուսուցանում»	Սուրեն Վարդումյան
Հոկտեմբերի 5-6	«Դասախոսների կատարողականի գնահատման հիմնական բաղադրիչները: Վերապատրաստումների կարիքների վերլուծություն. Մասնակցային և ստեղծագործական մոտեցումներ», «Ինչպես հրապարակել հոդվածներ միջազգային գրախոսվող ամսագրերում», «Մրցակցային առավելությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում» հանրային դասախոսությունները, Մասնագիտական փոխանակման բրիտանական ծրագրի շրջանակներում	Լիլիյա Ասրյան
Հոկտեմբերի 13-15	EU Funded Training Project “Workshop on the development of Staff in Pedagogy”	Հովսեփյան Գոհար
Հոկտեմբերի 15	Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրները «Հեղինակային նորաբանությունների տեքստակազմիչ դերը ֆենտրզի գրական ժանրում»	Աննա Շահբազյան
Հոկտեմբերի 15-16	«Գրականության և մշակույթի արդի խնդիրները» միջազգային գիտաժողով	Համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնի դասախոսներ
Հոկտեմբերի 15-16	Актуальные проблемы литературы и культуры «Интерпретация гомеровского вопроса в творчестве Д.Фаялза»	Կարինե Գուլանյան
Հոկտեմբերի 15-16	«Հայոց ցեղասպանություն – 100, ճանաչումից հատուցում» Օսմանական հակամշակույթը և հայերի ցեղասպանությունը	Էմիլ Օրդուխանյան

Հոկտեմբերի 15-16	«Հայոց ցեղասպանություն – 100, ճանաչումից՝ հատուցում» «Միջին Եվրոպայի» հայեցակարգը և Թուրքիայի հայկական քաղաքականությունը»	Հայկ Սուքիասյան
Հոկտեմբերի 16	Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրները «Իրականությունների թարգմանական դժվարությունները հայ ժամանակակից արձակի թարգմանության գործում»	Նարինե Գիշյան
Հոկտեմբերի 16, 2015թ.	Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրները «Միայնություն» իմույթով բառային միավորների թարգմանական խնդիրները Վ. Սարոյանի կարճ պատմվածքներում»	Մարիամ Բաղդասարյան
Հոկտեմբերի 16	«Համալսարանական շարունակական կրթություն. Հնարավորություններ և գործիքներ» միջազգային կոնֆերանս, Տեմպուս SSRULLI նախագծի շրջանակներում	Լիլիյա Ասրյան
Հոկտեմբերի 16	«Հայաստանը և եվրասիական ինտեգրացիան» կլոր սեղան «ԵՏՄ-ում Հայաստանի մասնակցության հեռանկարներն ու հիմնախնդիրները» քննարկմանը «Հայաստանի երիտասարդության մասնակցության նշանակությունը ԵՏՄ-ում Հայաստանի ինտեգրման գործընթացում» զեկույցի ներկայացում	Սուրեն Վարդումյան
Հոկտեմբերի 12-16 և 19-23	ՀՀ ֆինանսների նախարարության ԵՄ-ի Թվինինգ ծրագրի շրջանակներում կազմակերպված «Ֆինանսական կառավարում և հսկողություն» վերապատրաստում/սեմինար (ՀՀ պետական ներքին ֆինանսական հսկողության համակարգի կայացմանն օժանդակելու նպատակով)	Արկադի Պապոյան
Հոկտեմբերի 21	Межвузовская научно-практическая конференция «Художественные особенности романа Х.К.Онетти “Дадим слово ветру”»	Կարինե Գուլանյան
Հոկտեմբերի 22	ԵԱՀԿ, Ունիսոն ՀԿ – Բարձրագույն կրթություն բոլորի համար	Սասուն Մելիքյան
Հոկտեմբերի 22	Բաց մատչելիության շաբաթ «EIFL իրականացվող աշխատանքները Հայաստանում»	Աննա Զուլյան
Հոկտեմբերի 21- 23	«Հողաշեն ազգային ժառանգություն. Ինդը որպես նյութ Հայաստանի տարածքային զարգացման համար» «Նախագծեր Էրեբունի-Երևանի համար. Ազգային ժառանգություն, պահպանում, արժևորում և զբոսաշրջություն»	Գագիկ Գյուրջյան

Հոկտեմբեր, 2015	«Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրները» խորագրով միջազգային գիտաժողով «Հայոց դիցամտածողության առանձնահատկությունները»	Գոհար Վարդույան
Հոկտեմբեր, 2015	ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ «Տիեզերական օվկիանոսի և երկնային ծովի վերաբերյալ պատկերացումները հայոց դիցամտածողության մեջ»	Գոհար Վարդույան
Նոյեմբերի 23-27	Սեմինար՝ “The Semantics of Verbal Humor”	Իռեն Մադոյան, Հասմիկ Փիլավջյան, Գայանե Եղիազարյան և այլոք
Դեկտեմբերի 3-8	2014-15 ուստարվա ամենամյա 9-րդ գիտաժողով «Միջմշակութային իրազեկության ուսուցման առավելությունները ֆրանսերենի դասավանդման ընթացքում»	Մինասյան Ժակլին
2015թ.	«Ջահուկյանական ընթերցումներ»/միջազգային գիտաժողով/ Արդի հայերենի խոսքային գործունեության իմաստային ենթադաշտի բայերի գործածությունը բարե- կիրթ խոսքի կառույցներում	Ռուզաննա Դոխոյան
2015թ.	Ս. Աբրահամյանի 90- ամյակին նվիրված հանրապե- տական գիտաժողով, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ Արդի հայերենի ասացա- կան ԲԻՆ-ի բայերի բառակազմական առանձնահատ- կությունները	Ռուզաննա Դոխոյան
2015թ.	ԵՊԼՀ, հանրապետական գիտաժողով	Սուսաննա Տիոյան, Սուսաննա Աբազյան, Ալիսա Ղուկասյան, Գոհար Վարդանյան, Անահիտ Հակոբջանյան, Ռուզաննա Դոխոյան, Շամիրամ Մուրադյան, Գայանե Վերդյան և այլոք

Միջազգային համագործակցությունների շրջանակներում ԵՊԼՀ-ի ամբիոնների կողմից կազմակերպված սեմինարներ, դասախոսություններ և վերապատրաստումներ.

Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնը Բրիտանական հորիզոնների աջակցությամբ կազմակերպել է Լոնդոնի Մետրոպոլիտան համալսարանի դոկտոր Պատրիկ Գրեյի այցելությունը ԵՊԼՀ՝ «Դասախոսների կատարողականի գնահատման հիմնական բաղադրիչները: Վերապատրաստումների կարիքների վերլուծություն. Մասնակցային և ստեղծագործական մոտեցումներ», «Ինչպես հրապարակել հոդվածներ միջազգային գրախոսվող ամսագրերում», «Մրցակցային առավելությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում» հանրային դասախոսություններ կարդալու նպատակով: Հանրային դասախոսությունները ներառում էին քննարկումներ բուհերում ռազմավարական պլանավորման, կատարողականի բարձրացման նպատակով կիրառվող արդյունավետ մեխանիզմների և գործիքակազմի վերաբերյալ: Դասախոսություններին ներկա էին ԵՊԼՀ կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողները, ինչպես նաև այլ ստորաբաժանումների ներկայացուցիչներ և հյուրեր: Դասախոսությունների նպատակներն էին զարգացնել մասնագիտական կարողությունների կայունությունը, ամրապնդել հանրային քաղաքականության վերլուծության և քաղաքացիական կրթության զարգացման փորձը:

AUF- ի շրջանակներում 2015թ.-ի հոկտեմբերի 29-ից 30-ը Թբիլիսի Իլիայի պետական համալսարանում, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի CODFREUCOR ապիրանտուրայի բարձրագույն դպրոցի հիմնադիր ժողովին և երիտասարդ գիտնականների «Analyse du discours / Linguistique textuelle. Diversité des approches contemporaines» թեմայով 3-րդ միջազգային գիտաժողովին ամբիոնից մասնացել են՝ դոցենտ Կարինե Գրիգորյանը և դասախոս, ամբիոնի հայցորդ Աննա Մանուկյանը:

Ֆրանսիայում Դիդրոյի անվան հետ-ասպիրանտական ծրագրով 2015թ-ի հունիսի 5-ից մինչև օգոստոսի 5-ը ամբիոնի ավագ դասախոս, բ.գ.թ Վարդուշ Հարությունյանը ֆրանսիացի հայագետների աշխատությունների շուրջ գիտական հետազոտություններ է կատարել UHUSS (Ecole des hautes études en sciences sociales)-ում:

AUF-ի կողմից կազմակերպած ֆրանսերենի դասավանդման մեթոդիկայի շրջանակներում Ռումինիա, Իաշ քաղաքի Ալեքսանդրո Իօան Կուզայի համալսարանում հետ-ասպիրանտական ծրագրով 2015թ.-ի մարտի 1-ից մայիսի 31ը գիտական հետազոտություն է անցկացրել ամբիոնի ավագ դասախոս, մ.գ.թ. Մարինե Հովսեփյանը:

Մարտի 25-27-ը ԵՊԼՀ-ում անցկացվել է “RELANG” եռօրյա աշխատաժողով :”Constructing valid language tests and examinations based on the CEFR” թեմայով:

Ավստրիայի Վիեննայի համալսարանում ամբիոնի ավագ դասախոս, դոցենտ Արփինե Ա. Մկրտչյանը 2015թ.-ի օգոստոսի 8-ից 20-ը, Բարձրագույն դպրոցի շրջանակներում, դասախոսություններ է կարդացել հայցորդների և դոկտորանտների համար՝ «Գեղեարվեստական տեքստերի նշանագիտական վերլուծություն» թեմայով:
Ֆրանսերենի ամբիոնի դոցենտ Կարինե Գրիգորյանը եղել է Փարիզ-Սորբեն 3 համալսարանի Master 2 «Didactique du français et des langues» ֆակուլտետի ուսանող Անդրանիկ Մաճկալյանի (Ա. Մաճկալյանը մանկավարժական պրակտիկան անցկացրել է ԵՊԼՀ-ի «Ակադեմիական նվաճումների կենտրոն» -ում 2015թ.-ի մարտի 4-ից մինչև հունիսի 4-ը) մանակավարժական պրակտիկայի ղեկավարը:
Իրականացվել է ԵՊԼՀ-ի և Փարիզ-Սորբեն համալսարանի հետ դոկտորանտուրայի համադեկավարում /Դոկտորանտ՝ Անի Սուլթանյան, Համադեկավարներ՝ Նաիրա Մանուկյան, Ժան-Իվ Մասոն/:
Փարիզի արևելյան լեզուների ինստիտուտի գիտական հետազոտությունների կենտրոնի հետ (ղեկավար՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատվավոր անդամ, պրոֆեսոր Անահիտ Տոնապետյան): 2015թ. նոյեմբերին կազմակերպվել է գիտամեթոդական սեմինար՝ «Հայագիտությունը Ֆրանսիայում» թեմայով, որին զեկուցումով հանդես է եկել պրոֆեսոր Անահիտ Տոնապետյանը:
Սորբոնի «Փարիզ 4» համալսարանի հետ համագործակցության շրջանակներում իրականացվող համատեղ դիպլոմավորման ծրագիր/ Լ. Աբգարյան/շրջանավարտ/, Արփինե Հարությունյան (մագիստրատուրա 2-րդ կուրս), Մարիամ Հովհաննիսյան (մագիստրատուրա 2-րդ կուրս)/, ուսանողների փոխանակում և գիտական ուսումնասիրությունների համատեղ ղեկավարում/Յանա Անանյան/, դասախոսների վերապատրաստում /Ա. Ջանիկյան/, ուսումնական դասընթացներ ուսանողների համար/ Բ. Ֆրանկո/, համատեղ ուսումնական ծրագիր /Langue, littérature et civilisation/:
Տեղեկատվության և հանրային հաղորդակցման տեխնոլոգիաների ԳՈՒ կենտրոնը մասնակցել է ՀՀ Նախագահի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Հայոց ազատագրական պայքարի դարաբաղյան ճակատի հերոսներ» ծրագրին: Վերոնշյալ ծրագիրն իրականացվել է ԼՂՀ-ում սեպտեմբերի 25-ից 27-ը:
“Fulbright” ծրագրի շրջանակներում <i>English Club</i>”-ի շրջանակներում բնախոսների կողմից կազմակերպվող հավելյալ անգլերենի ուսումնական պարապմունքներ՝ Իրականացված անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոնի դասախոսներ Դանիկա Հարությունի (ԱՄՆ) և Դեյվիդ Ալլարդայսի կողմից:

Միջազգային թատերական փառատոն /Հունիսի 1-7, 2015./:
Մոսկվայի Արտասահմանյան գրականության ինստիտուտի հետ համագործակցության շրջանակներում համատեղ կազմակերպվում և անցկացվում է Բրյուսովյան ընթերցումներ գիտաժողովը:
Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնը դիմել և շահել է «Մասնագիտական փոխանակման բրիտանական ծրագիրը» (British Professional Exchange Programme) դրամաշնորհը և այդ ծրագրի շրջանակներում 2015 թ. հոկտեմբերի 5-ին և 6-ին Բրիտանական հորիզոնների աջակցությամբ կազմակերպել է Լոնդոնի Մետրոպոլիտան համալսարանի դոկտոր Պատրիկ Գրեյի այցելությունը ԵՊԼՀ՝ «Դասախոսների կատարողականի գնահատման հիմնական բաղադրիչները: Վերապատրաստումների կարիքների վերլուծություն. մասնակցային և ստեղծագործական մոտեցումներ», «Ինչպես հրապարակել հոդվածներ միջազգային գրախոսվող ամսագրերում», «Մրցակցային առավելությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում» հանրային դասախոսություններ կարդալու նպատակով: Հանրային դասախոսությունները ներառում էին քննարկումներ բուհերում ռազմավարական պլանավորման, կատարողականի բարձրացման նպատակով կիրառվող արդյունավետ մեխանիզմների և գործիքակազմի վերաբերյալ:
Հայագիտության ամբիոնը համագործակցում է ՌԴ ԳԱ լեզվաբանական հետազոտությունների ինստիտուտի հետ /տնօրեն՝ Ն. Կազանսկի/, որի շրջանակներում կազմակերպվում են համատեղ գիտաժողովներ:
Հոկտեմբերի 14-15 Springer հրատարակչության սեմինարներ հայաստանյան գիտնականների համար: Սեմինարները վարեցին՝ Dr. Nabil Khelifi, Publishing Editor, և Dr. Jeffrey Robens, Editorial Development Manager:
Ստավրոպոլի պետական համալսարանի հետ համատեղ Բրյուսովի ստեղծագործությունների հրատարակում, բանասեր մագիստրոսների պրակտիկայի անցկացում:
Ցեղասպանության սոցիալական հետևանքները և հայկական հարցի հետագա զարգացումները թեմայով սեմինար(զեկ.՝ սոցիոլոգ-տնտեսագետ Ռ. Մարտիրոսյան).
Արևելահայերենի կառուցվածքային առանձնահատկությունները (զեկ. Բ.Գ.Գ. Գ. Գևորգյան)
Լրագրային տեքստերի լեզվական առանձնահատկությունները թեմայով սեմինար (զեկ. Բ.Գ.Թ. Գ. Վարդանյան)

«Մեսրոպ Մաշտոց անվան բաղադրիչներով կազմված բառերը (բառարանային մշակումը, ստեղծման ժամանակը և հեղինակները)», զեկուցող՝ Բ.Գ.Թ. Դավիթ Գյուրջինյան
Սեմինար՝ «Գրական արևելահայերենի բնութագիրը», զեկուցող՝ Բ.Գ.Դ. Գայանե Գևորգյան
«Առաջին աշխարհամարտը և հայոց ցեղասպանությունը» թեմայով սեմինար /զեկուցող՝ պ.Գ.Թ., դոցենտ Ավետիս Հարությունյան/
Հայագիտության ամբիոնը կազմակերպել է «Գիտական խոսքի կառուցման առանձնահատկությունները» թեմայով դասախոսություն /զեկուցող՝ Բ.Գ.Դ. Գայանե Գևորգյան/:
Դասընթաց՝ Հայաստանի բարձրագույն կրթության զարգացում Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին ինտեգրվելու նպատակով ԵՄ Թվինինգ ծրագրի շրջանակներում «Կրթական վերջնարդյունքներ» թեմայով:
Դասախոսություն՝ «Հայագիտությունը Ֆրանսիայում» թեմայով /զեկուցող՝ պրոֆեսոր Անահիտ Տոնապետյան/:

4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Միջոցառումներ

2015թ.-ին ԵՊԼՀ-ում անցկացվեցին մի շարք նշանակալի միջոցառումներ ԵՊԼՀ տարբեր ստորաբաժանումների կողմից, որոնք ներկայացվում են ստորև:

«Միջազգային լրագրություն» Գիտատեսական կենտրոն:

Ս.թ. սեպտեմբերի 28-ին տեղի է ունեցել **«Մեդիատեքստի լեզվակուլտուրոլոգիական վերլուծություն»** և **«Նեյմինգի ժամանակակից տեխնոլոգիաները»** թեմաներով վարպետության դաս, որը վարել է Սանկտ-Պետերբուրգի արհմիությունների հումանիտար համալսարանի լրագրության ամբիոնի պրոֆեսոր Կլարա Շարաֆադինան: Վերջինս խոսել է նեյմինգի տեխնոլոգիաների, մեդիայում դրանց կիրառության և կարևորության, ինչպես նաև մեդիատեքստի ստեղծման տեխնոլոգիաների թեմաներով: Հանդիպումը կազմակերպվել է ԵՊԼՀ և Սանկտ-Պետերբուրգի արհմիությունների հումանիտար համալսարանի համագործակցության շրջանակներում:

Ս.թ. հոկտեմբերի 12-ին տեղի է ունեցել **«Մեդիագրագիտություն»** դասախոսությունը, որը վարել է ամերիկացի լրագրող, դասախոս և մեդիա ձեռներեց Դեն Գիլմորը, ով ներկայումս Արիզոնայի նահանգային համալսարանի Ուոլթեր Քրոնքայթի լրագրության և զանգվածային հաղորդակցության դպրոցի Knight թվային մեդիա ձեռներեցության կենտրոնի տնօրենն է: Դասախոսությունը կազմակերպվել է հատուկ ԵՊԼՀ-ի ուսանողության և պրոֆեսորադասախոսական կազմի, ինչպես նաև բուհի հետ համագործակցող մասնագետների համար:

Համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոն

Ս.թ. հոկտեմբերի 16-17-ին տեղի է ունեցել **«Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրներ»** խորագրով միջազգային գիտաժողով, որին առկա և հեռակա իրենց մասնակցությունն են ունենում հյուրեր թե՛ Հայաստանից, թե՛ արտերկրից: Գիտաժողովը կազմակերպվում է ամեն տարի հոկտեմբերին Համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնի կողմից: Գիտաժողովի շրջանակներում քննվում են գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրներ:

Ռուսաց և սլավոնական լեզվաբանության ամբիոն

Ս.թ. հոկտեմբերի 8-ին տեղի է ունեցել նվիրված Մարինա Յվետայովայի պոեզիային նվիրված միջոցառում:

Ս.թ. հոկտեմբերի 19-ին ԵՊԼՀ-ում տեղի է ունեցել **«Հայաստանում ռուսերեն խոսքի 8-րդ օրեր»** միջոցառումը, որին ողջույնի խոսքով հանդես են եկել ԵՊԼՀ ռեկտոր Գ.Գասպարյանը, ՀՀ-ում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպանի խորհրդական Ա.Իվանովը,

Երևանում գիտության և մշակույթի ռուսական կենտրոնի տնօրեն Մ.Կալինինը: Միջոցառումը կազմակերպվել է Երևանում գիտության և մշակույթի ռուսական կենտրոնի կողմից:

Անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոն

Ս.թ. սեպտեմբերի 25-ին ԵՊԼՀ-ում տեղի է ունեցել հանդիպում ամերիկահայ գրող-թարգմանիչ **Քրիս Բոհջալյանի** հետ՝ նվիրված գրող-թարգմանչի գործունեությանը: Շնորհանդեսին ներկա էին ԵՊԼՀ պրոֆեսորադասախոսական կազմը և «Թարգմանչական գործ» մասնագիտության տարբեր կուրսերի ուսանողներ, որոնք տարբեր հարց ու պատասխանների միջոցով ծանոթացան գրողի բեղմնավոր ստեղծագործական գործունեությանը:

Ս.թ. սեպտեմբեր ամսից Անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոնում դասավանդում է Ֆուլբրայթ ծրագրի հյուշ-ներկայացուցիչ Դանիկա Հարությունյանը (ԱՄՆ):

Անգլերենի բառագիտության և ոճաբանության ամբիոն

Ս.թ. հոկտեմբերի 15-ին ԵՊԼՀ-ում տեղի է ունեցել «**Գրականության և մշակույթի արդի խնդիրներ**» խորագրով միջազգային գիտաժողովը:

Դասավանդող արտասահմանցի դասախոսներ և ուսանողներ

2015 թվականի ընթացքում ԵՊԼՀ-ում դասավանդել են 24 օտարերկրյա դասախոսներ Կորեայից, Ճապոնիայից, Եգիպտոսից, Ռումինիայից, Ուկրաինայից, Հնդկաստանից, Չինաստանից, Իրանից, Լեհաստանից, Բուլղարիայից, Գերմանիայից, Մեծ Բրիտանիայից, ԱՄՆ-ից և այլն:

2015թ. ԵՊԼՀ-ում ուսանել են ավելի քան 67 սփյուռքահայ և արտասահմանցի ուսանողներ Հունաստանից, Գերմանիայից, Սերբիայից, Իրանից, Կորեայից, Վրաստանից, Ռուսաստանից, Թուրքմենստանից, Ուկրաինայից, Սիրիայից, Լիբանանից, Հորդանանից:

Դեսպանների և բարձրաստիճան հյուրերի այցեր

2015թ. ընթացքում ԵՊԼՀ են այցելել ՀՀ-ում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան պարոն Թիան Էրլունը, ՀՀ-ում Հնդկաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան պարոն Սուրեշ Բաբու Թադիպանենին, ՀՀ-ում Ռումինիայի արտակարգ եւ լիազոր դեսպան պարոն Սորին Վասիլեն, ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպանպարոն Էյջի Տագուչին, ՀՀ-ում Լեհաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան պարոն Եժի Լովակովսկին, ՀՀ-ում Եվրոպական Միության պատվիրակության ղեկավար դեսպան պարոն Պյոտր Անտոնի Սվիտալսկին, ՀՀ-ում Հունաստանի Հանրապետության

արտակարգ և լիազոր դեսպան պարոն Իոաննիս Տայիսը, ՀՀ-ում Չեխիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան պարոն Պետր Միկիսկան, ՀՀ-ում Կորեայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան պարոն Փակ Նո Բյոգը (մոտ 20 այց):

ԵՊԼՀ այցելած բարձրաստիճան հյուրերի շարքում կարելի է առանձնացնել Եվրոպական Խորհրդարանի փոխնախագահ, Եվրոնեսթ Խորհրդարանական Վեհաժողովի փոխնախագահ պարոն **Ռիչարդ Չարնեցկու** այցը ԵՊԼՀ ս.թ. հոկտեմբերի 16-ին: Տեղի է ունեցել պարոն Չարնեցկուն ԵՊԼՀ պատվավոր դոկտորի կոչում շնորհելու արարողությունը, որին հաջորդել է նրա դասախոսությունը «Հայաստան - ԵՄ» կապեր թեմայով:

ԵՊԼՀ այցելած այլ բարձրաստիճան հյուրերի շարքում է չինացի հայտնի գործարար, «Ընկերությունների համաշխարհային խմբի» նախագահ դոկտոր **Ջ. Հոնը** (ս. թ. սեպտեմբերի 30-ին), որը ներկայացրեց “China and the New Silk Road: Inheriting the Past; Opening the Future” թեմայով դասախոսությունը:

2015թ. դեկտեմբերի 2-ին ԵՊԼՀ է այցելել Չեխիայի Խորհրդարանի պատգամավորների պալատի խոսնակ **Յան Համաչեկը** և հանդես եկել «European Integration and Post-Soviet Area» թեմայով դասախոսությամբ:

Այս ուս. տարում համատեղ ծրագրերով ԵՊԼՀ են այցելել նաև մեր գործընկեր համալսարաններից մի շարք դասախոսներ:

Համագործակցության պայմանագրեր

2015թ. համագործակցության պայմանագրեր են կնքվել մի շարք համալսարանների հետ՝

1. Բրաշովի համալսարան /Ռումինիա/ (Հավելված 12)
2. Լոդզի համալսարան /Լեհաստան/ (Հավելված 13)
3. Դեջոն համալսարան /Կորեա/ (Հավելված 14)
4. Արմավիրի պետական մանկավարժական ակադեմիա /ՌԴ/ (Հավելված 15)
5. Սանկտ - Պետերբուրգի արհմիությունների հումանիտար համալսարան /ՌԴ/ (Հավելված 16)
6. Կուբանի պետական համալսարան /ՌԴ/ (Հավելված 17)
7. Մինսկի պետական լեզվաբանական համալսարան /Բելառուս/ (Հավելված 18)
8. ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության հայաստանյան գրասենյակ (Հավելված 19)

Համագործակցություն եվրոպական, ասիական և ԱՊՀ կրթական կառույցների հետ

2015 թվականին ԵՊԼՀ-ն ակտիվ համագործակցություն է ծավալել եվրոպական, ասիական և ԱՊՀ մի շարք կրթական կառույցների հետ:

2015թ. ԵՊԼՀ 3 ուսանող ուսանել են Կորեայում, 2 ուսանող՝ Ռուսաստանում ԱՊՀ ցանցային համալսարանի հետ համագործակցության շրջանակում, 1 ուսանող՝ Գերմանիայում, 20 ուսանող՝ Չինաստանում, 5 ուսանող Ֆրանսիայում՝ Փարիզ – Սորբոն համալսարանի հետ համագործակցության շրջանակներում:

Կոնֆուցիուսի ինստիտուտ

2015 թվականի մարտին ՀՀ-ում առաջին անգամ անցկացվեց «Չինական երգի մրցույթ»:

Ս.թ. ապրիլին ԵՊԼՀ ԿԻ-ին Ուշույի ֆեդերացիայի հետ համատեղ իրականացրեց «Չինական ուշուի փառատոն», որի մասնակցում էին մարզիկներ Հայաստանից, Կենտրոնական Ասիայից և Պարսկաստանից:

2015 թվականի մայիսի 8-ին երկրորդ անգամ տեղի է ունեցել «Չինարենի կամուրջ» միջազգային մրցույթի հայաստանյան փուլը, որի հաղթողը մեկնել է Չինաստան մասնակցելու մրցույթի եզրափակիչ փուլին:

Ս. թ. հունիս-հուլիս ամիսներին շուրջ 40 աշակերտներ ՀՀ տարբեր դպրոցներից և ԿԻ ունկնդիրներ «Ամառային ճամբար» ծրագրի շրջանակներում մեկնել են ՉԺՀ-ի Դալիան քաղաք, սովորել չինարեն և այցելել Պեկինի տեսարժան վայրեր:

Ս.թ. սեպտեմբերին ԵՊԼՀ-ում Հանբանի աջակցությամբ բացվել է «Չինարենի թարգմանչական լաբորատորիան»:

Ս.թ. նոյեմբերի 20-ին ԵՊԼՀ Կոնֆուցիուսի ինստիտուտը Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ կազմակերպել է «Մետաքսե ճանապարհը 21-րդ դարում՝ հեռանկարներ և համագործակցություն» խորագրով միջազգային ֆորումը, որին մասնակցել են 30 ներկայացուցիչ Չինաստանից, Ռուսաստանից, Թուրքմենստանից, Ղրղստանից, Վրաստանից և այլն:

Չինաստանի Դալիան քաղաքի օտար լեզուների համալսարանում 2015թ. դեկտեմբերի 9-ին տեղի է ունեցել Չինաստանում հայագիտական առաջին կենտրոնի բացումը, որը հնարավոր է եղել իրականացնել Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի և Դալիանի օտար լեզուների համալսարանի համագործակցության արդյունքում:

Կենտրոնի բացման արարողությանը ներկա են եղել Չինաստանում Հայաստանի դեսպան Արմեն Սարգսյանը, Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի պատվիրակությունը՝ ռեկտոր Գայանե Գասպարյանի գլխավորությամբ, Դալիանի օտար լեզուների համալսարանի ղեկավարությունը, Դալիանի քաղաքապետարանի ներկայացուցիչներ:

2015 թվականի տվյալներով ԵՊԼՀ ԿԻ-ն ունի շուրջ 300 ունկնդիր, 4 չինական կենտրոն:

Դրամաշնորհներ

ԵՊԼՀ-ն շարունակում է հաջողությամբ իրականացնել **Erasmus Mundus** ծրագրի երկու նախագծերի, որոնք գործելու են մինչև 2017 թ.:

Դրանք են՝

1. ՅԱՆՈՒՍ II / Inter-Academic Network ErasmUs MunduS II/
2. Effort /Education Force: Driving Mobility for EU- East Europe cooperation/

Erasmus Mundus-ի շրջանակներում իրականացվող ծրագրերը առաջարկում են կրթաթոշակներ ուսանողներին, դասախոսներին, հետազոտողներին և բուհերի աշխատակիցներին ցանկացած գիտական բնագավառում:

2015 թվականին Էրազմուս Մունդուս գործող 2 ծրագրերի (IANUS II, EFFORT) շրջանակներն ենթարկվում էին ԵՊԼՀ 11 ուսանողների և 3 վարչական աշխատողների վերապատրաստվել են եվրոպական համալսարաններում, իսկ ԵՊԼՀ-ն հյուրընկալել է 1 մագիստրոսի և 1 վարչական աշխատողի:

Եվրոպական կամավորական ծրագրի շրջանակներում /EVS/ ԵՊԼՀ-ն ընդունել է 9 կամավորի, որոնք համալսարանում անցկացնում են օտար լեզուների արտալսարանային դասընթացներ, ինչպես նաև կազմակերպում մշակութային միջոցառումներ:

2015թ ԵՊԼՀ-ն կնքել է պայմանագրեր **Էրազմուս+** ծրագրի **Միջազգային կրեդիտային շարժունության գործողության** շրջանակներում, որը փոխարինում է Էրազմուս Մունդուսի Գործողություն 2-ին: Ծրագիրը նախատեսում է շարժունության հոսքեր բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար:

Կնքվել են պայմանագրեր հետևյալ համալսարանների հետ՝

1. Ալեքսանդրու Իոան Կուզա համալսարան /Ռումինա/
2. Լոդզի համալսարան / Լեհաստան/
3. Նեապոլի արևելագիտության համալսարան /Իտալիա/
4. Գրանադայի համալսարան /Իսպանիա/
5. Տարտուի համալսարան/Էստոնիա/
6. Լուվենի կաթոլիկ համալսարան/ Բելգիա/

ԵՊԼՀ-ն շարունակում է իրականացնել հետևյալ **Տեմպուս** ծրագրերը՝

1. Achieving and Checking the Alignment between Academic Programmes and (համակարգող),
2. Structural Development of the Third Cycle Based on Salzburg Principles,
3. Fostering Autonomy and Accountability: Development of State-of-the-art HE Management System for Efficient Changes in Line with Bologna Principles,
4. Implementation of National and Sectorial Qualifications Frameworks in Armenia,
5. Strengthening the Specific Role of Universities as LLL Institution
6. Development of New Modules for International Bachelor and Master Programmes in Sustainable Tourism Management

TEMPUS VERITAS

Ս.թ. հունվարի 26-27 Տեմպուս Վերիտաս ծրագրի շրջանակներում կազմակերպվել է հերթական **Formulation of Award Criteria & Quality Standards in Doctoral Education աշխատաժողովը**, որին ներկա են գտնվել արտասահմանյան ներկայացուցիչներ Շվեդայից (KTH Royal Institute of Technology), Գերմանիայից (Հայդելբերգի համալսարան), Իսպանիայից (Ջիրոնայի համալսարան), Անգլիայից (Bath Spa University) և Ավստրալիայից (World University Service):

5. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

2015թ. ընթացքում համալսարանը հազեցվել է հետևյալ համակարգչային ու տեխնիկական միջոցներով.

- TEMPUS SSRULLI դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել 6 դյուրակիր համակարգիչ:
- Հունարենի և հունական մշակույթի կենտրոնի համար ձեռք է բերվել 1 դյուրակիր, 1 սեղանի համակարգիչ և 1 գունավոր լազերային տպիչ:
- Համալսարանի Կոնֆուցիուսի ինստիտուտի աջակցությամբ Չինարենի համակարգչային լինգվաֆոնային լսարանի համար ձեռք է բերվել 16 համակարգիչ, հեռուստացույց, լազերային տպիչ և հարակից պարագաներ: Համակարգչային ու տեխնիկական միջոցներով կահավորվել է 2206 լսարանը: Բացի այդ կատարվել է լսարանի վերանորոգում, համապատասխան կահույքի ձեռք բերում, տեղային համակարգչային ցանցի ստեղծում և համալսարանի ցանցին ու համացանցին միացում: Համակարգիչներում տեղադրվել է լինգվաֆոնային լսարանի համար նախատեսված համակարգչային ծրագրային փաթեթ (HордМастер® 5.0, HордКлиент®5.0) 15 ուսանողի և 1 դասախոսի համար: Սեպտեմբերի 30-ին տեղի ունեցավ Չինարենի համակարգչային լինգվաֆոնային լսարանի հանդիսավոր բացումը:



Տեսալսողական նյութերի մշակումը և թվայնացումը

- Արխիվացվել են 2014-2015թթ ֆոտոնյութեր (4 DVD սկավառակ), 2014-2015թթ տեսագրություններ (8 DVD սկավառակ) և ձայնագրություններ (4 DVD սկավառակ)
- Կատարվել է 2015թ. պետական ավարտական քննությունների ձայնագրում և արխիվացում (2 DVD սկավառակ):

Էլեկտրոնային թեստավորումը և էլ. ուսուցումը ԵՊԼՀ-ում

- Արխիվացվել են 2014-2015 ուս.տարվա էլ.թեստավորման և էլ.ուսուցման կառավարման համակարգերի բազաները:

- 2014-2015 ուս.տարվա 2-րդ կիսամյակում իրականացվել են էլեկտրոնային թեստեր կրթական 3 մակարդակներում 4 թեստեր, որին մասնակցել են 60 խումբ՝ 858 ուսանողներ:
- 2015-2016 ուս.տարվա 1-ին կիսամյակում իրականացվել են էլեկտրոնային թեստեր կրթական 2 մակարդակներում 3 թեստ, որին մասնակցել են 83 խումբ՝ 1179 ուսանողներ:
- Մշակվել են նոր էլեկտրոնային դասընթացներ տարբեր մասնագիտությունների համար /տուրիզմ, լեզուների դասավանդման մեթոդիկա/, վերանայվել են նախկին դասընթացները և ավելացվել նոր բաժիններ:
- Կատարվել է Moodle համակարգի թարմացում՝ ավելացվել է էլեկտրոնային դեկանատ մոդուլը, որի վերաբերյալ կատարվում են կարգաբերման աշխատանքներ

Իրականացվող ուսումնամեթոդական աշխատանքները

- «Թվային հրատարակչական տեխնոլոգիաներ» մագիստրոսական դասընթացի Առարկայական նկարագրի թարմացում և լրամշակում
- Մագիստրատուրայի «Լեզվաբանություն և SS» մասնագիտացման առարկայական նկարագրերի վերանայում և մագիստրոսների արտադրական պրակտիկայի կազմակերպում ու իրականացում

Ուսումնական գործընթացի կառավարման էլեկտրոնային համակարգը ԵՊԼՀ-ում

- Համալսարանում գործում է փաստաթղթաշրջանառության Mulberry համակարգը:
- Գործում է Ուսանողների գնահատման էլեկտրոնային ավտոմատացված համակարգ: Համակարգը հնարավորություն է տալիս ստանալ ավելի քան 20 հաշվետվություններ ուսումնական գործընթացի և ուսանողների գնահատման համակարգերի վերաբերյալ:
- Համալսարանում գործարկվել է մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգը (ՄԿԿՏՀ):

Համալսարնի կայքը (www.brusov.am)

- 2015թ. հունվարից գործարկվել է կայքի նորացված տարբերակը:
- Գործում են նաև հետևյալ ենթակայքերը.
 - ✓ confucius.brusov.am
 - ✓ journ.brusov.am
 - ✓ old.brusov.am
 - ✓ mail.brusov.am
 - ✓ exam.brusov.am
 - ✓ credit.brusov.am
 - ✓ align.brusov.am
 - ✓ moodle.brusov.am

Տեղեկատվություն ԵՊԼՀ-ում համակարգչային և տեխնիկական միջոցներով հագեցվածության մասին.

- Բոլոր ստարաբաժանումները, ամբիոնները, դեկանատները, կենտրոնները համալրված են համակարգիչներով և միացված են համալսարանի համակարգչային ցանցին:
- Համակարգչային ցանցին միացած բոլոր համակարգիչներին տրամադրվում է 16 Մբիթ/վրկ արագագործությամբ Համացանց:
- Համալսարանում գործում է նաև անլար (WiFi) 3 Մբիթ/վրկ արագագործությամբ Համացանց: Հոկտեմբերին պրովայդերի կողմից կատարվել է անլար ցանցի կենտրոնական սարքավորման նորացում:
- Համալսարանում գործում են համակարգչային և տեխնիկական միջոցներով հագեցած 13 համակարգչային լսարաններ, սրահներ, լաբորատորիաներ, 3 դահլիճներ և 15 լսարաններ: Այնտեղ պարբերաբար կատարվում է պրոֆիլակտիկ տեխնիկական սպասարկում:
- Կատարվել են համալսարանի բոլոր միջոցառումների ֆոտովիդեո նկարահանումները:

Տեղեկատվություն գրադարանի մասին / 2015

Ընթերցողների թիվը /ուս. և աշխ./	3050
Գրքերի շրջանառություն սպասարկման բաժնից/ հաճախումներ Առցանց պատվեր	42329գիրք/14343 ուս. 38
Գրքերի շրջանառություն ընթերցասրահից/հաճախումներ	16854 գիրք/7218 ուս.
Համալրվել է գրքերով	1984 օրինակ
Էլեկտրոնային ռեսուրսներից օգտվողների թիվը/օրական	25-40 ուս. դաս., մագ., ասպ.
Տեղեկատվական բաժնից օգտվողների թիվը/տարեկան	5696 ուս. դաս., մագ., ասպ
Փակ մատչելիության սկզբունքով օգտագործվող էլ. գրքեր	168
ALEPH ծրագրով ներմուծվել է	4894 գիրք
Համալրվել է Ավստրիական գրադարան	439 գիրք

- Գրադարանի ֆոնդը հասանելի է ԵՊՀ բոլոր ուսանողներին, դասախոսներին, ասպիրանտներին, հայցորդներին և աշխատակիցներին: Գործում է «առցանց պատվեր» և «հարց գրադարանավարին» ծառայությունները:
- Էլեկտրոնային գիտական գրականություն - **EBSCOhost, eLIBRARY, SpringerLink, Polpred.com, Sage knowledge, Credo**, և այլ:



ԵՊԼՀ գրադարանը

- համագործակցում է Հայաստանի բոլոր բուհական գրադարանների հետ՝ գրքերի փոխանակում, փորձի փոխանակում: Կազմակերպվում են սեմինարներ, հանդիպումներ էլեկտրոնային քարտարանի աշխատանքների վերաբերյալ:
- հանդիսանում է Հայաստանի էլեկտրոնային գրադարանների կոնսորցիումի անդամ: Կազմակերպում է սեմինարներ ինչպես ԵՊԼՀ դասախոսների և ուսանողների, այնպես էլ այլ գրադարանների աշխատակիցների համար: Կոնսորցիումի նախագահն է ԵՊԼՀ գրադարանի վարիչը:
- իրականացնում է միջգրադարանային բաժնույթ Ազգային գրադարանի և ՀՀ ԱԳ ֆունդամենտալ գրադարանի հետ:
- իրականացնում է գրքափոխանակություն Վաշինգտոնի Կոնգրեսի գրադարանի հետ:
- ԵՊԼՀ օտարալեզու ֆոնդերը համալրվում են դեսպանատների և հյուպատոսարանների միջոցով՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրիայի, Շվեյցարիայի, Իտալիայի, Հոլանդիայի, Չինաստանի և այլն:
- ԵՊԼՀ գրադարանում գործում է Ավստրիական գրադարանը, որը հանդիսանում է որպես այդ երկրի մշակութային և գիտական կենտրոն Հայաստանում: Այդ գրադարանի գործունեության շրջանակներում կազմակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, գիտաժողովներ, սեմինարներ, դասընթացներ՝ Ավստրիայից և Շվեյցարիայից հրավիրված պրոֆեսորների մասնակցությամբ: Այս գրադարանում իրականացվում է Ավստրիայից, Գերմանիայից ժամանած կամավորների պրակտիկան: Յուրաքանչյուր տարի Ավստրիական գրադարանի գրադարանավարները անցնում են երկշաբաթյա վերապատրաստում Ավստրիայում:

- ընդգրկված է որպես գործընկեր Erasmus+ Capacity Building in Higher Education "Library Network Support Services: modernising libraries in Armenia, Moldova and Belarus through library staff development and reforming libraries" ծրագրում:
- գրադարնի աշխատակիցները անցնում են անգլերենի դասընթացներ հատուկ գրադարանավարների համար ԱՄՆ դեսպանատան Ռեսուրս կենտրոնում:
- համագործակցում է ՄԱԿ-ի, Եվրախորհրդի, ԵԱՀԿ գրասենյակների հետ:
- համագործակցում է «Առաջին գրական գործակալության», «Անտարես», «Զանգակ», Մոսկվայի «Совпадение» հրատարակչությունների հետ: Կազմակերպվում են գրքերի շնորհանդեսներ, հանդիպումներ գրողների հետ, այդ թվում՝ արտասահմանյան, ինչպես նաև իրականացվում են տարբեր նախագծեր:

Ֆրանց Վերֆելի անվ. Ավստրիական գրադարանի 2015թ. գործունեությունը

1. Մարտի 14-15-ին Ավստրիական գրադարանում անցկացվեց Գերմաներենի իմացության ավստրիական քննություն (*Österreichisches Sprachdiplom, ÖSD*):
2. Մարտի 28-29-ին Ավստրիական գրադարանում անցկացվեցին **«Ավստրիական օրեր Երևանում»** խորագրով մասնագիտական վերապատրաստման սեմինարներ գերմաներեն լեզվի ուսուցիչների համար: Միջոցառումը կազմակերպվել էր Ավստրիայի կրթության և կանանց դաշնային նախարարության անմիջական մասնակցությամբ: Սեմինարներին ելույթներով և աշխատաժողովներով իրենց մասնակցությունը ցուցաբերեցին Ավստրիայից հրավիրված պրոֆեսորներ:
3. Մարտի 28-ին **«Ավստրիական օրեր Երևանում»** սեմինարների շրջանակներում Ավստրիական գրադարանը հյուրընկալել էր ավստրիացի հայտնի գրող **Ռենատե Վելշին**, ով գրադարանի այցելուների համար ընթերցեց հատվածներ իր վեպերից:
4. Մայիսի 16-17-ը Ավստրիական գրադարանում անցկացվեց Գերմաներենի իմացության ավստրիական քննություն (*Österreichisches Sprachdiplom, ÖSD*):
5. Մայիսի 22-ին Ավստրիական գրադարանի ավստրիացի պրակտիկանտ **Աննե Հիրշը** և DAAD-ի երկարաժամկետ դասախոս **Անգելա Ներենցը** կազմակերպել էին վիկտորինա Գերմանիայի, Ավստրիայի և Շվեյցարիայի երկրագիտության վերաբերյալ:
6. Մայիսի 26-ին Ավստրիական գրադարանում **«Հոգու սև ոտքերը»** խորագիրը կրող զեկույցով հանդես եկավ գերմանագետ և թատերագետ, Լինցի գրականության

արխիվի աշխատակից տիկին **Յուլիա Դանիելյիկը**: Իր ելույթում տիկին Դանիելյիկը անդրադարձավ նաև Ֆրանց Վերֆելի ստեղծագործությանը:

7. Մայիսի 27-ին Ավստրիական գրադարանը հյուրընկալեց հայագետ և հրապարակախոս տիկին **Բարբարա Դենշերին**: Նա ներկաների համար կարդաց ելույթ՝ **«Կարլ Քոստուր և նրա աշխարհամարտային «Մարդկության վերջին օրերը» դրաման»** խորագրով:
8. Օգոստոսի 30-ին Ավստրիական գրադարանում կազմակերպվեց հանդիպում Ավստրիայի Քերնթեն երկրամասի ուսուցիչների հետ: Հանդիպման ընթացքում Հայաստանում կրթական համակարգի մասին ելույթ ունեցան ԵՊԼՀ պրոռեկտոր պրոֆ. տիկին **Լուսինե Ֆլյանը** և Ավստրիական գրադարանի ղեկավար տիկին **Լիանա Սաֆարյանը**:
9. Սեպտեմբերի 17-ին Ավստրիական գրադարանում տեղի ունեցավ ուսանողական համաժողով նվիրված Առաջին աշխարհամարտի 100-ամյակին, որի ընթացքում ցուցադրվեց **„Krieg der Bilder“** փաստագրական ֆիլմաշարը:
10. Սեպտեմբերի 25-ին Ավստրիական գրադարանը հյուրընկալեց Վիեննայի համալսարանի դոկտոր տիկին **Ալեքսանդրա Միլներին**, որը ԵՊԼՀ ուսանողների հետ անցկացրեց աշխատաժողով նվիրված ավստրիացի գրող Ինգերորգ Բախմանի կյանքին և ստեղծագործությանը:
11. Սեպտեմբերի 26-27-ին Անի հյուրանոցում տեղի ունեցավ **Գերմաներենի ուսուցիչների 2-րդ համաժողովը**, որի ընթացքում ի թիվս այլոց ներկայացված էր նաև Ավստրիական գրադարանը: Համաժողովին մասնակցություն ունեցան գերմանացի գործընկերների հետ միասին նաև Ավստրիական դեսպանության ներկայացուցիչները: Համաժողովի ընթացքում ելույթով հանդես եկավ Ավստրիական գրադարանի ղեկավար տիկին **Լիանա Սաֆարյանը**, ներկայացնելով գրադարանի գործունեությունը:
12. Սեպտեմբերի 26-ին **Գերմաներենի ուսուցիչների 2-րդ համաժողովի** շրջանակներում զեկույցով հանդես եկավ Ավստրիական գրադարանի հյուր Վիեննայի համալսարանի դոկտոր տիկին **Ալեքսանդրա Միլները**: Զեկույցը կրում էր **«Ժամանակակից գերմանախոս գրականության նոր միտումները»** խորագիրը:
13. Սեպտեմբերի 27-ին **Գերմաներենի ուսուցիչների 2-րդ համաժողովի** շրջանակներում Գյոթե ինստիտուտում անցկացվեց աշխատաժողով գերմաներեն լեզվի ուսուցիչների համար, որը վարում էր Ավստրիայի կրթության և կանանց դաշնային նախարարության աշխատակից պարոն **Քլաուս Ռեդլը**: Աշխատաժողովը կրում էր **«Մանկապատանեկական գրականությունը գերմաներենի դասի ընթացքում»** խորագիրը:

14. Հոկտեմբերի 4-5-ը Ավստրիական գրադարանում անցկացվեց Գերմաներենի իմացության ավստրիական քննություն (*Österreichisches Sprachdiplom, ÖSD*):
15. Հոկտեմբերի 9-10-ը ԵՊԼՀ-ում Գերմաներենի ամբիոնի հետ համատեղ անկացվեց մասնագիտական սեմինար **«Մշակույթի պատմությունն Առաջին աշխարհամարտի տարիներին»** խորագրով: Սեմինարը վարում էր Մարբուրգի համալսարանի պրոֆեսոր **Ուլրիխ Զիգը**:
16. Հոկտեմբերի 9-ին Ավստրիական գրադարանում զեկույցով հանդես եկավ ավստրիական ÖRF ալիքի լրագրող տիկին **Իռենե Զուխին**: Զեկույցը կրում էր **«Փաուլ Վիթգենշթայնը և Առաջին աշխարհամարտը. բեկում և հնարավորություն»** խորագիրը:
17. Հոկտեմբերի 9-ին Ավստրիական գրադարանում ուսանողների նախաձեռնությամբ կազմակերպվել էին ընթերցումներ **Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը»** վեպից, որին հրավիրված էին ավստրիացի, շվեյցարացի և գերմանացի ունկնդիրներ:
18. Հոկտեմբերի 22-ին Ավստրիական գրադարանում տեղի ունեցավ **«Լիլի Լիլի»** ֆիլմի դիտում և քննարկում DAAD-ի երկարաժամկետ դասախոս **Անգելա Ներենցի** հետ միասին:
19. Նոյեմբերի 14-15-ը Ավստրիական գրադարանում կանցկացվեն Գերմաներենի իմացության ավստրիական քննություն (*Österreichisches Sprachdiplom, ÖSD*):
20. Նոյեմբերի 17-ին Գյոթե ինստիտուտի հետ համատեղ կկազմակերպվի ֆիլմի դիտում և քննարկում ԵՊԼՀ և այլ համալսարանների ուսանողների հետ:
21. Նոյեմբերի 19-ին Ավստրիական գրադարանը կհյուրընկալի Հայաստանում Գերմանիայի դաշնային հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան **Մաթիաս Քիսլերին**: Այցելությունը կուղեկցվի Գերմանիայի վերամիրավորմանը նվիրված ցուցահանդեսով Ավստրիական գրադարանում: Հընթացս ԵՊԼՀ ուսանողները կներկայացնեն ցուցահանդեսը և կծանոթացնեն Ավստրիական գրադարանի գործունեությանը:

6. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ, ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ են տարվել ուսանողական ինքնակառավարման մարմնի՝ ուսանողական խորհրդի կարողությունների զարգացման և բուհի կառավարման գործում սովորողների մասնակցության ընդլայման ուղղությամբ: Ուսանողական խորհրդի ներկայացուցիչները ներգրավված են և մասնակցում են ԵՊԼՀ կառավարման մարմինների աշխատանքներին: ԵՊԼՀ գիտական խորհրդի և ֆակուլտետների խորհուրդների կողմից ստեղծված հանձնաժողովներում ներգրավված են նաև սովորող անդամներ: Ուսանողական խորհրդի նախագահը ներգրավված է նաև մանդատային հանձնաժողովում:
2. ԵՊԼՀ ղեկավարությունը /ռեկտոր, պրոռեկտորներ, դեկաններ և այլ ստորաբաժանումների ղեկավարներ/ բազմաթիվ հանդիպումներ են ունեցել ուսանողների հետ: Հանդիպումների ընթացքում ուսանողներին տեղեկատվություն է տրամադրվել գործող կրթական համակարգի, իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:
3. Սեպտեմբերին տեղի ունեցած գիտական խորհրդի նիստում հաստատվել է ԵՊԼՀ ուսանողի ուղեցույցը:
4. ՀՀ կրթության և գիտության նախարարության պատվերով «Այ Փի Էս Սի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի հետ իրականացվել է սոցիոլոգիական հետազոտություն, որի նպատակն էր ուսումնասիրել ուսանողների ընդգրկվածությունը Բոլոնիայի գործընթացում:
5. Երևանի քաղաքապետարանի Ավետիք Իսահակյանի անվան Կենտրոնական գրադարանի կատարած վերլուծական աշխատանքի արդյունքում ԵՊԼՀ-ն «2014թ. Երևանի «Ամենակարդացվող բուհ» անվանակարգում զբաղեցրել է 3-րդ տեղը: Իսահակյանի անվան Կենտրոնական գրադարանի ընթերցող է հանդիսանում ԵՊԼՀ 1251 ուսանող, որը կազմում է ուսանողների մոտ 30 տոկոսը:
6. Օգոստոսին ԵՊԼՀ 5 ուսանողներ մասնակցել են ԼՂՀ Հաղթության տարածաշրջանում տեղի ունեցած համաբուհական «Բանակում-2015» ուսանողական ճամբարին: Ճամբարի ընթացքում ԵՊԼՀ ուսանողները աչքի են ընկել իրենց կազմակերպական բարձր մակարդակով:
7. Ուսանողների միջազգային օրվա առիթով կազմակերպվել է «ԵՊԼՀ Լավագույն ուսանող-2015» մրցանակաբաշխությունը:
8. Հանրապետական ուսանողական մարզական խաղերին մասնակցել են 48 ուսանողներ՝ թեթև աթլետիկա /16 ուսանող/, սեղանի թենիս /8 ուսանող/, վոլեյբոլ /12

ուսանող/, բասկետբոլ / 12 ուսանող/: ԵՊԼՀ թիմը թեթև աթլետիկայի մրցաշարում զբաղացրել է պատվավոր 2-րդ տեղը, իսկ սեղանի թենիսի մրցաշարում՝ 3-րդ տեղը:

9. ԵՊԼՀ ուսանողները մասնակցություն են ունեցել Համահայկական 6-րդ խաղերին, որի ընթացքում նվաճել են 2 արծաթե մեդալ /վոլեյբոլ/ և 2 ոսկե մեդալ /բադմինտոն/:
10. ԵՊԼՀ-ում կազմակերպվել են ներհամալսարանական առաջնություններ մի շարք մարզաձևերից /»Վագորդի շաբաթ» /318 ուսանող/, սեղանի թենիս /38 ուսանող/, վոլեյբոլի առաջնություն /69 ուսանող/ և այլն/:
11. ԵՊԼՀ ուսանողները մասնակցել են Հայ-ռուսական /Սլավոնական/ համալսարանում տեղի ունեցած Մեծ Հայրենական պատերազմի /1941-1945թթ./ հաղթանակի 70-ամյակին նվիրված գիտաժողովին /մայիս 4-6/:
12. ԵՊԼՀ ներկայացուցիչները մասնակցել են ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի կազմակերպած կուրսանտական 13-րդ գիտական կոնֆերանսին /մայիս 25-30/:
13. ԵՊԼՀ մի շարք ուսանողներ, որպես ջոկատավարներ, ամռան ամիսներին մասնակցել են ճամբարային աշխատանքներին /հունիս-օգոստոս/:
14. ԵՊԼՀ ուսանողները ակտիվորեն մասնակցել են Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի շրջանավարտների երրորդ ֆորումի կազմակերպչական աշխատանքներին /հոկտեմբեր 19-25/:
15. Անգլերեն, գերմաներեն և իսպաներեն լեզուներին տիրապետող ԵՊԼՀ 20 կամավորներ մասնակցել են հոկտեմբերի 3-ին տեղի ունեցած միջազգային մարաթոնյան վազքի մրցաշարի կազմակերպչական աշխատանքներին /հոկտեմբեր/:
16. Կազմակերպչական ու հաղորդակցման բարձր ունակություններով օժտված ուսանողները մասնակցել են Համահայկական 6-րդ խաղերի կազմակերպչական աշխատանքներին:
17. Աշխատանքներ են իրականացվել ներառական կրթության ապահովման համար: ԵՊԼՀ ներկայացուցիչը ակտիվորեն մասնակցել է ՀՀ վարչապետի 2008 թվականի փետրվարի 25 N 98-Ն որոշմամբ ստեղծված Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի աշխատանքներին:
18. ԵՊԼՀ-ն ակտիվորեն մասնակցել է «ՈԻՆԻՍՏ» հասարակական կազմակերպության և Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության /ԵԱՀԿ/ երևանյան գրասենյակի կազմակերպած «Բարձրագույն կրթություն բոլորի համար» խորագրով ծրագրին, որի նպատակն էր Հայաստանում բարձրագույն կրթության ներառականության խթանումը՝ ներառական քաղաքականության մոդելի մշակման և

բարձրագույն ուսումնական հաստատություններում դրա ներդրմանը նպաստելու միջոցով:

19. Մեպտեմբեր ամսին «Հատուկ պոլիկնինիկա» ՓԲԸ-ի բժշկական հանձնաժողովը բուժ-կանխարգելիչ զննության է ենթարկել համալսարանի 1-ին կուրսի ուսանողներին: ԵՊԼՀ բակալավրիատ ընդունված 578 ուսանողներից բուժզննմանը մասնակցել են 542-ը: Հիվանդություն ունեցող ուսանողները վերցվել են դիսպանսեր հսկողության տակ:
20. Ավանդույթի համաձայն ԵՊԼՀ-ում անցկացվեց անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն լեզուների դպրոցական առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլը /ապրիլ 3-5/:
21. ԵՊԼՀ վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչները «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ում մասնակցել են վերապատրաստման դասընթացների «Արտակարգ իրավիճակներում բնակչության և քաղաքացիական պաշտպանության հիմունքներ» թեմայով:
22. ԵՊԼՀ ներկայացուցիչները մասնակցել են Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի /ՀՈԻԱԱ/ և Եվրոպական ուսանողական միության կազմակերպած Եվրոպական ուսանողական միության /ԵՈԻՄ/ կառավարման խորհրդի 68-րդ համաժողովի աշխատանքներին /մայիս/:
23. ԵՊԼՀ ներկայացուցիչները մասնակցել են Եվրոպական միության և ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ կազմակերպած «Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության զարգացում՝ եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու նպատակով» թվինինգ ծրագրի երկօրյա սեմինարին /հունիս 23-24/:
24. ԵՊԼՀ ներկայացուցիչները մասնակցել են Հայաստանի ուսանողական ջոկատների 50-ամյակին նվիրված միջոցառումներին և հանդիսավոր նիստին /հոկտեմբեր/:
25. ԵՊԼՀ կոլեկտիվը ակտիվորեն մասնակցել է Երևանի քաղաքապետարանի կազմակերպած համաքաղաքային ծառատունկներին և շաբաթօրյակներին:
26. Կազմակերպվել է «Բաց դռներ» ծրագիրը, որի շրջանակում Երևանի և մարզերի ավագ դպրոցների աշակերտները այցելել են համալսարան:
27. Կազմակերպվել են մասնագիտական կողմնորոշմանն ուղղված դասընթացներ ուսանողների և շրջանավարտների համար, մասնավորապես՝
 - «Այ Էյ Բի» կազմակերպության կողմից «Խաղերը անգլերենի ուսուցման մաս. տեսականից դեպի գործնական իրականություն» թեմայով /2015թ. փետրվար/, որին մասնակցել են թվով 32 ուսանող և շրջանավարտ,

- «Ֆինանսաբանկային կենտրոն» հիմնադրամի կողմից դասընթաց՝ «ՀՀ ֆինանսաբանկային համակարգում աշխատել ցանկացող անձանց իրազեկության բարձրացում» թեմայով /2015թ. մարտ/, որին մասնակցել են թվով 28 ուսանող և շրջանավարտ,
- «ԱՅՄԵՔ Հայաստան» երիտասարդական կազմակերպության կողմից դասընթացների շարք՝ ուղղված երիտասարդների աշխատունակության բարձրացմանը /2015թ. մայիս/, որին մասնակցել են թվով 206 ուսանող և շրջանավարտ:

28. Ուսանողների և շրջանավարտների մասնակցությամբ կազմակերպվել են մասնագիտական կողմնորոշման պարբերական հանդիպումներ գործատուների հետ /ՀՀ գործատուների հանրապետական միություն, Օրանժ Հայաստան, Կրթություն Հայաստան, Այվազյան և գործընկերներ, Երիտասարդ իրավաբանների ասոցիացիա, «Լոնդոնյ ալ» միջազգային կազմակերպություն, «Տանժեռ» աշխատանքի տեղավորման գործակալություն, Պեպսի, Հայ առաջադեմ երիտասարդություն, «Գործ բոլորին» կադրային գործակալություն, Գլոբալ մեդիա լաբ, Այ Էյ Բի, Եվրոպական երիտասարդական պառլամենտ, «Ինգո Արմենիա» ապահովագրական գործակալություն, Ռոստելեկոմ, Արմենիա Ինշուրանս և այլն):

29. Կազմակերպվել են խորհրդատվություններ ինքնակենսագրություն, մոտիվացիոն նամակ, երաշխավորագիր կազմելու, աշխատանքային հարցազրույցի ներկայանալու վերաբերյալ:

30. ԵՊԼՀ պաշտոնական կայքի և սոցիալական ցանցերի միջոցով ուսանողների և շրջանավարտների շրջանում տեղեկատվություն է տարածվել ազգային, տարածաշրջանային, ինչպես նաև միջազգային կրթական ծրագրերի ու թափուր աշխատատեղերի վերաբերյալ:

31. Կազմակերպվել են պետական, մասնավոր և հասարակական կազմակերպություններում փորձակների ծրագրեր /internship/, որոնց շրջանակում ուսանողներն ու շրջանավարտները վճարովի կամ կամավոր հիմունքներով ոչ պարտադիր պրակտիկա են անցնում:

32. 2014թ. մայիսին ՀՀ ութ պետական բուհերի Կարիերայի կենտրոնների միջև կնքված համագործակցության հուշագրի շրջանակում նոյեմբերին Հայաստանի ազգային ագրարային համալսարանում կազմակերպվել է «Բուհից աշխատաշուկա՝ մեկ քայլ» խորագրով միջբուհական աշխատանքի տոնավաճառը:

33. Աշխատանքներ են իրականացվել ԵՊԼՀ հանրային կապերի, ներքին և արտաքին հաղորդակցության ոլորտներում քաղաքականության վերաբերյալ համապատասխան ծրագրերի մշակման և իրականացման, բուհին վերաբերող հրապարակումների վերլուծության, ԵՊԼՀ վարկանիշի և հեղինակության էլ ավելի բարձրացման, խորհրդանիշների ու քարոզչական այլ նյութերի տարածման,

էլեկտրոնային միջոցների, ԵՊԼՀ-ին առնչվող տեսանյութերի մշակման ու մի շարք այլ աշխատանքային ուղղություններով:

34. Շարունակվել է համագործակցությունը հայաստանյան լրատվամիջոցների հետ՝ ԵՊԼՀ-ում կազմակերպված միջոցառումները լուսաբանելու համար: 2015թ.-ին ստացվել է հանրային նշանակության միջոցառման շուրջ 60 հայտ: Շուրջ 40 մամուլի հաղորդագրություններ են ուղարկվել ԶԼՄ-ներին: Իրականացվել է տպագիր ԶԼՄ-ներում և ինտերնետային կայքերում ԵՊԼՀ-ին վերաբերող հրապարակված նյութերի մոնիթորինգ: Համապատասխան նյութերը յուրաքանչյուր օր ներկայացվել են ԵՊԼՀ ղեկավարությանը, իրականացվել է նյութերի վերլուծություն:
35. Կապեր են հաստատվել նոր ձևավորված զանգվածային լրատվության միջոցների հետ:
36. ԵՊԼՀ-ի տվյալների եռալեզու գրանցման աշխատանքներ են իրականացվել «Մփյուռ» և «Գլոբալ ինֆո» տեղեկատվություն:
37. ԵՊԼՀ մասնաշենքերում առկա հեռուստաէկրաններին տեղեկատվություն և հայտարարություններ են տեղադրվել ԵՊԼՀ-ում կայանալիք միջոցառումների վերաբերյալ:
38. Հետևողական աշխատանք է կատարվել ԵՊԼՀ խորհրդանիշների մասսայականացման ուղղությամբ:
39. Զարգացել է ինտերնետային ռեսուրսները, համացանցային տիրույթում տեղեկատվություն և տեսանյութեր են տարածվել ԵՊԼՀ վերաբերյալ: Թարմացվել է ԵՊԼՀ պաշտոնական ինտերնետային կայքը /www.yslu.am, www.brusov.am/: Կայքի օրական այցելուների միջին թիվ անցնում է 200-ից: Շահառուների հետ ապահովվել է առցանց հետադարձ կապ, ինչպես նաև մշակվել և վերլուծվել են էլեկտրոնային փոստով ստացված նամակները: Մոնիթորինգային ցանցերում վարվել են ԵՊԼՀ էջերը, մասնավորապես facebook-ի /<https://www.facebook.com/YSLU.V.Brusov/> տիրույթում բազմաթիվ այցելուներ հնարավորություն են ունեցել ծանոթանալու ԵՊԼՀ-ում տեղի ունեցող իրադարձություններին /ԵՊԼՀ Facebook-ի էջերի հետևորդների ընդհանուր թիվը հասել է 6600-ի/:
40. «Վերմետրիքս» կայքի բուհերի ռեյտինգավորման սանդակում ԵՊԼՀ-ն ամրապնդել է իր դիրքերը: ԵՊԼՀ-ն լեզվաբանական ուղղվածություն ունեցող բուհերի շարքում ԱՊՀ-ում զբաղեցնում է 2-րդ տեղը՝ չնչին միավորներով զիջելով Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանին:

41. ԶԼՄ-ների, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների կողմից ԵՊԼՀ-ին հասցեագրված հարցումներին օրենքով սահմանված ժամկետներում տրվել են սպառիչ պատասխաններ:
42. Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են 60 լուսանկարահանումներ, ընդհանուր թվով՝ 2183 լուսանկար: Համապատասխան բաժնի աշխատակիցները ԵՊԼՀ-ում կայացած միջոցառումների լուսանկարներով ապահովել են ինչպես համալսարանական, այնպես էլ հանրապետական մամուլը:
43. ԵՊԼՀ հասարակայնության հետ կապերի պատասխանատուների կողմից կազմվել է ԵՊԼՀ 2016թ. PR պլանը:
44. ԵՊԼՀ աշխատակիցների և ուսանողների համար ապահովվել է արագ ինտերնետ:
45. Կատարվել են ընթացիկ համակարգչային տեխնիկայի վերանորոգման և ցանցի սպասարկման աշխատանքներ: Ապահովվել է տեխնիկայի սպասարկումը ԵՊԼՀ-ում կայացած տարբեր միջոցառումների ժամանակ: Համապատասխան բաժնի աշխատակիցները մշտապես աջակցել են ԵՊԼՀ աշխատակիցներին և սովորողներին համակարգչային տեխնիկայի շահագործման հետ կապված խնդիրներում: Տրամադրվել է համակարգչային ծրագրերին և տեխնիկային վերաբերող խորհրդատվություն, տարվել են բացատրական աշխատանքներ համակարգչային անվտանգության ուղղությամբ:
46. Ներհա համալսարանական կարգերի վերամշակման հանձնաժողովը քննարկել և պատրաստել է մի շարք նոր կանոնակարգեր, որոնք ընդունվել են Գիտական խորհրդի կողմից՝
- «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխության կազմակերպման և անցկացման» կանոնակարգ /մարտ/,
 - «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի համալսարանական շարունակական կրթության» կանոնադրություն /ապրիլ/,
 - «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի գրադարանի» կանոնակարգ /դեկտեմբեր/:
47. Վերանայվել են ԵՊԼՀ տարբեր տարակարգերի աշխատակիցների և ուսանողների հետ կնքվող պայմանագրերի բովանդակությունը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հաշվետու ժամանակահատվածում ԵՊԼՀ-ն սերտորեն համագործակցել է տարբեր նվազախմբերի, թատրոնների, թանգարանների, պատկերասրահների և այլ մշակութային հաստատությունների հետ: ԵՊԼՀ աշխատակիցները և ուսանողները հնարավորություն են ունեցել անվճար մասնակցելու տարաբնույթ ներկայացումների:
2. ԵՊԼՀ աշխատակիցները ձեռք են բերել Լեոնային Ղարաբաղի Հանրապետության իշխանությունների նախաձեռնած Արցախի ազգային վիճակախաղի 3-րդ խաղարկության 200 տոմս:
3. Կատարալեզործվել է ուսման վարձերի հավաքագրման փաթեթային համակարգը. բոլոր կուրսերի սոցիալապես անապահով ուսանողները հնարավորություն են ստացել ուսման վարձը վճարել մաս-մաս:
4. Հաշվետու ժամանակաշրջանում բուհի միջոցների հաշվին մասնակի կամ ամբողջությամբ փոխհատուցվել է 933 ուսանողի ուսման վարձ՝ 56.991.800 ՀՀ դրամի չափով:
5. 138 սոցիալապես անապահով ուսանողների ուսման վարձի մեծ մասը փոխհատուցվել է ՀՀ Կառավարության կողմից՝ 13.846.500 ՀՀ դրամի չափով:
6. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կազմակերպած «Արմինե և Կարապետ Զամբակ կրթավճարի» մրցույթին մասնակցել և հաղթել են ԵՊԼՀ 2 ուսանողներ:
7. ԱՄՔՈՐ/Հայաստան բարեգործական հասարակական կազմակերպությունը մասնակիորեն փոխհատուցել է 20 ուսանողների ուսման վարձը՝ 1.500.000 ՀՀ դրամի չափով:
8. Հայկական բարեգործական ընդհանուր միությունը /ՀԲԸՄ/ մասնակի փոխհատուցել է սիրահայ 34 ուսանողների ուսման վճարի զգալի մասը՝ 4.773.500 ՀՀ դրամի չափով:
9. «Վիվասել ՄՏՍ» ընկերությունը մասնակի կամ ամբողջությամբ փոխհատուցել է 34 ուսանողների ուսման վճարը՝ 5.950.000 ՀՀ դրամի չափով:
10. Իտալերեն բաժնի 3 ուսանողներ շահել են ՀՀ Իտալիայի դեսպանատան կազմակերպած կրթաթոշակի մրցույթում:
11. ԵՊԼՀ կոլեկտիվ պայմանագրի նախապատրաստման համար հանձնաժողով ստեղծելու մասին ԵՊԼՀ ռեկտորի և ԵՊԼՀ արհկոմիտեի նախագահի համատեղ ստորագրած արձանագրության համաձայն՝ 2015թ. հունվարի 21-ին ռեկտորի հրամանով ստեղծվել է ԵՊԼՀ կոլեկտիվ պայմանագրի նախապատրաստման համար

համատեղ հանձնաժողով: Համատեղ հանձնաժողովի կողմից մշակված կոլեկտիվ պայմանագիրը, Կոլեկտիվի ընդհանուր ժողովի կողմից հավանության արժանանալուց հետո, փետրվարին ստորագրվել է ԵՊԼՀ ռեկտորի և ԵՊԼՀ արհկոմիտեի նախագահի կողմից:

12. ԵՊԼՀ արհկոմիտեի կողմից իրականացվել են բազմաթիվ սոցիալական ծրագրեր: Արհկոմիտեն իր միջոցների հաշվին, որպես օգնություն, ԵՊԼՀ 39 աշխատակիցների տրամադրել է 2.645.000 դրամի օգնություն:
13. Շարունակվել է տոնական միջոցառումների առիթով համալսարանում բարի ավանդույթ դարձած տարաբնույթ սոցիալական միջոցառումների ձեռնարկումը: Այսպես, ԵՊԼՀ աշխատակիցների և նրանց երեխաների համար կազմակերպվել են տարբեր միջոցառումներ՝ 408.000 դրամի չափով:
14. ԵՊԼՀ կին աշխատակիցների համար իրականացվել է Կանանց միջազգային օրվան՝ Մարտի 8-ին նվիրված համահամալսարանական միջոցառում, որի համար ԵՊԼՀ արհկոմիտեն տրամադրել է 720.000 դրամ:
15. ԵՊԼՀ արհկոմիտեն միջոցառումներ է կազմակերպել նաև Ամանորի և Սուրբ ծննդյան տոների առթիվ՝ իր միջոցներից ծախսելով 396.000 դրամ:

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԻՋՈՑԱԴՈՒՄՆԵՐԻ 2015Թ. ԾՐԱԳԻՐ

Հակակոռուպցիոն միջոցառումները հանդիսանում են Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի գործունեության կարևոր ռազմավարական ուղղություն: 2015թ. փետրվարի 17-ին ԵՊԼՀ գիտական խորհրդի կողմից հաստատվեց «ԵՊԼՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2015թ. համալիր միջոցառումների ծրագիրը» /*Տես՝ հավելված 20*/, որի նպատակն էր առավել համակարգված դարձնել հակակոռուպցիոն միջոցառումները, ապահովել դրանց շարունակականությունը, բարձրացնել հակակոռուպցիոն միջոցառումների մոնիթորինգի արդյունավետությունը, իրականացվող աշխատանքների հրապարակայնությունը ու հաշվետվողականությունը:

ԵՊԼՀ ռազմավարության բազմաթիվ դրույթներ, որոնք մասնավորապես վերաբերում են կրթության որակի բարձրացմանը, հանրային կապերի զարգացմանը, կադրային քաղաքականությանը, տեղեկատվական ռեսուրսների զարգացմանը, կառավարման արդյունավետության բարձրացմանը, ուսանողական ինքնավարության ընդլայմանը և մի շարք այլ հարցերին, միաժամանակ ունեն հակակոռուպցիոն կարևոր ազդեցություն:

ԵՊԼՀ ռեկտորի 2012թ. հոկտեմբերի 8-ի հրամանով ստեղծված Հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման հանձնաժողովի՝ յուրաքանչյուր տարվա համար ներկայացրած ծրագրերը ԵՊԼՀ-ում կոռուպցիոն երևույթների դեմ արդյունավետ պայքարի հիմնական ուղենիշն է, քանի որ դրանում արտացոլված են գոյություն ունեցող կոռուպցիոն դրսևորումների դեմ նպատակային պայքարի հիմնական միջոցառումները, դրանց իրականացման արդյունքում ակնկալվող ուղղակի արդյունքները, սահմանված են պատասխանատու ստորաբաժանումները, պաշտոնատար անձինք և գործողությունների իրականացման ժամկետները: Ծրագրերը պահանջում են հակակոռուպցիոն գործիքակազմի ճշգրիտ ընտրություն, արդյունավետ ու համապարփակ միջոցառումների համալիր իրականացում՝ հնարավորինս ապահովելով հստակ, գնահատելի և իրատեսական արդյունքներ:

ԵՊԼՀ-ում կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողական մթնոլորտ ձևավորելու նպատակով իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնք միտված են եղել վերացնելու առկա մի շարք խնդիրների հանդեպ անտարբերությունը և խթանելու սովորողների և պրոֆեսորադասախոսական կազմի ակտիվությունը հակակոռուպցիոն պայքարում: Սովորողների մասնակցությունը հակակոռուպցիոն գործընթացին էական նշանակություն ունի վերջինիս արդյունավետության համար, ինչի պատճառով մշտապես միջոցառումներ են ձեռնարկվում սովորողների ակտիվությունը բարձրացնելու նպատակով: Կազմակերպվել են մի շարք սեմինարներ և քննարկումներ: Ռեկտորի, պրոռեկտորների և դեկանների՝ սովորողների հետ հանդիպումների, գիտական խորհրդի և ռեկտորատի նիստերի և մի շարք այլ միջոցառումների ժամանակ

առանձին ուշադրություն է դարձվել կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհադուրժողականության ձևավորմանը:

Հաշվետու ժամանակահատվածում կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով տեղի է ունեցել վարչարարության բարելավում, էլեկտրոնային կառավարման համակարգի զարգացում, ստացված յուրաքանչյուր ահազանգին պատշաճ արձագանքում:

Կրթության որակի վերահսկման նպատակով իրականացվել է կրթական ծառայությունների մատուցման մշտադիտարկում, կրթության որակի վերաբերյալ ուսանողների, շրջանավարտների և գործատուների բավարարվածության պարզում և քննարկում, սովորողների ներգրավվածության ապահովում արդյունքների քննարկման և վերլուծության գործընթացում:

Ապահովել է ընթացիկ և ամփոփիչ ստուգումների թափանցիկությունը: Ամփոփիչ ատեստավորման գործընթացը ձայնագրվում է: Շարունակվել են նախորդ տարիներից ներդրված պետական քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության ողջ ընթացքը ձայնագրող և առցանց վերահսկողությունն ապահովող համակարգի շահագործման ու զարգացման աշխատանքները: Այդ համակարգի շնորհիվ ուսանողները կարող են բողոքարկել քննությունների արդյունքները:

Հրապարակվում են մանդատային հանձնաժողովի որոշումները:

Ապահովվել է ասպիրանտուրայի ընդունելության գործընթացի թափանցիկությունը: Մշակվել են ասպիրանտուրայի ընդունելության քննությունների անցկացման արդյունավետ մեխանիզմներ:

Ապահովվել է ուսանողական զեղչերի տրամադրման գործընթացի թափանցիկությունը, ինչի արդյունքում ուսանողության շրջանում բարձրացել է իրազեկվածությունը: Ուսանողական զեղչերի տրամադրման գործընթացում ակտիվ մասնակցություն են ունենում ինչպես ֆակուլտետի, այնպես էլ համալսարանի ուսանողական խորհուրդները:

ԵՊԼՀ ռեկտորը, ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորը բազմաթիվ հանդիպումներ են ունեցել ուսանողների հետ, որտեղ քննարկումներ են եղել բուհական համակարգում հնարավոր կոռուպցիոն ռիսկերի մասին, ներկայացվել են ԵՊԼՀ ձեռքբերումները կոռուպցիոն երևույթների դեմ պայքարում: Ուսանողները տեղեկացվել նաև ԵՊԼՀ հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման հանձնաժողովի աշխատանքների մասին, ծանոթացել են ԵՊԼՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2015թ. համալիր միջոցառումների ծրագրին:

Հետևողական աշխատանքներ են կատարվել հանրային կապերի, ԵՊԼՀ-ին վերաբերող տեղեկատվության մատչելիության և թափանցիկության ապահովման ուղղությամբ: Ինտերնետային պաշտոնական կայքի միջոցով հասանելի են եղել գործող

բոլոր կանոնակարգերը: ԵՊԼՀ կայքի «Փաստաթղթեր» բաժնում առկա են ՀՀ կրթության ոլորտին վերաբերող օրենսդրությունը, ԵՊԼՀ կանոնադրությունը և կանոնակարգերը, ԵՊԼՀ բյուջեն և այլն:

Շահակից կազմակերպություններին տրամադրվել է համապատասխան օժանդակություն հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման ընթացքում:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է նաև հակակոռուպցիոն ծրագրի մշտական մոնիթորինգ:

ԵՊԼՀ հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման հանձնաժողովը 2016թ. հունվարին գիտական խորհրդին է ներկայացնելու 2015թ. կատարված աշխատանքների հաշվետվություն:

ԵՊԼՀ ռեկտորի նախագահությամբ գործող հանձնաժողովը պարբերաբար հրավիրել է նիստեր և իրականացրել հակակոռուպցիոն միջոցառումների մշտադիտարկում: Հանձնաժողովը նախապատրաստում է 2016թ. կոռուպցիոն երևույթների դեմ համալիր պայքարի ծրագիրը, որը 2016թ. հունվարին կներկայացվի ԵՊԼՀ գիտական խորհրդի հաստատմանը:

ԵՊԼՀ հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման հանձնաժողովի անդամները մասնակցել են մի շարք համապետական և միջազգային միջոցառումների, մասնավորապես՝

- «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպության ու «Հանրային քաղաքականության ինստիտուտ» /ՀՔԻ/ հետազոտական կենտրոնի կազմակերպած «Հակակոռուպցիոն քաղաքականությունը ՀՀ կրթության ոլորտում» թեմայով հետազոտության արդյունքների քննարկում /մարտ/,
- Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի կազմակերպած «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» երկամյա ծրագրի մեկնարկային միջոցառում /մայիս/,
- Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի և ՀՀ կրթության և գիտության նախարարության կազմակերպած «Բարեվարքության ամրապնդում բարձրագույն ուսումնական համակարգում» թեմայով համաժողով /նոյեմբեր, ք. Շաղկաձոր/:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանը ակտիվորեն մասնակցել է Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված համապետական միջոցառումներին: 2014թ. դեկտեմբերի 25-ին կայացած ԵՊԼՀ գիտական խորհրդի N 4 նիստում որոշում է ընդունվել ԵՊԼՀ ռեկտորի գլխավորությամբ ստեղծել Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումները համակարգող հանձնաժողով: Հանձնաժողովը 2015թ. փետրվարի 17-ին ԵՊԼՀ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացրեց 27 կետերից բաղկացած միջոցառումների ծրագիր */Տես՝ հավելված 21/*: Փետրվար-դեկտեմբեր ամիսներին ԵՊԼՀ տարածքում և դրանից դուրս կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ, որոնցից հարկ ենք համարում առանձնացնել հետևյալները.

1. «Հայոց ցեղասպանությունը և եվրոպական հրապարակախոսությունը» գրքի տպագրություն /հեղ. Մ. Ամիրխանյան/:
2. Բակալավրիատի 4-րդ և մագ. 2-րդ կուրսի 9 ուսանողների արտադրական պրակտիկայի անցկացում Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում: Պրակտիկայի ընթացքում ԵՊԼՀ ուսանողները ակտիվորեն մասնակցել են Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումներին նվիրված համապետական միջոցառումների կազմակերպմանը՝ թարգմանելով բազմաթիվ կարևորագույն փաստաթղթեր /փետրվար-մարտ/:
3. Արտասահմանյան գործընկեր համալսարաններին և կառույցներին տեղեկատվության տրամադրում Հայոց ցեղասպանության վերաբերյալ /հոդվածներ, ֆիլմեր, տեսահոլովակներ և այլն/:
4. Ուսանողների և դասախոսների շրջանում տեղեկատվական նյութերի տարածում Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Տարածվել է նաև տարելիցի խորհրդանիշ անմոռուկը:
5. ԵՊԼՀ ուսանողների մասնակցություն Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի կազմակերպած «20-րդ դարի ցեղասպանություններ. դատապարտում, ճանաչում և հատուցում» թեմայով գիտաժողովին /մարտ/:
6. Հայոց ցեղասպանությունը թեմայով շարադրությունների և էսսեների մրցույթի կազմակերպում /մարտ-մայիս/:
7. Հայոց ցեղասպանությունը թեմայով ներբուհական և միջբուհական ինտելեկտուալ խաղերի կազմակերպում /մարտ-ապրիլ/:

8. Գիտաժողովների, կոնֆերանսների, սեմինար-քննարկումների, կլոր սեղանների, դասախոսությունների, թեմատիկ զրույցների կազմակերպում /»Ցեղասպանության սոցիալական հետևանքները և հայկական հարցի հետագա զարգացումները», «Գեղանկարչությունը և պոեզիան միջմշակութային փոխհարաբերությունների անդրադարձում /20-րդ դարի ֆրանսիական գեղանկարիչների և բանաստեղծների կյանքն ու ստեղծագործությունը», «Հայոց ցեղասպանության թեման համաշխարհային գրականության մեջ», «20-րդ դարի սկզբին Ֆրանսիայում ծավալվող Հայանպաստ շարժման պատմությունը /Ա. Չոպանյան, Ա. Ֆրանս, Ժ. Կլեմենտ, Ժ. Ժորես/, «Հայ պոեզիան ֆրանսերեն թարգմանություններում /Սիամանթո, Վարուժան, Սևակ, Թեքեյան/, «Առաջին աշխարհամարտը և հայոց ցեղասպանությունը», «Հայոց ցեղասպանության փաստի արձարծումը և մեկնաբանումը եվրոպական /իսպանական, իտալական, հունական, ռումինական/ մամուլում», «Հայոց ցեղասպանության փաստի արձարծումը և մեկնաբանումը Արևելքի և Ասիայի երկրների /Իրան, Թուրքիա, Արաբական երկրներ, Կորեա, Չինաստան, Ճապոնիա/ մամուլում» և այլն/:
9. Հայկական գործասերում Հայոց ցեղասպանության մասին դասախոսությունների անցկացում /մարտ-մայիս/:
10. Հանրապետության դպրոցներում զրույցների անցկացում Հայոց ցեղասպանության վերաբերյալ /մարտ-մայիս/:
11. Հայոց ցեղասպանությանը նվիրված գրքերի ցուցահանդես /մարտ-դեկտեմբեր/:
12. «Զոհապարտված ցեղասպանությունները նոր ցեղասպանություններ են ծնում» վերնագրով ստենդի պատրաստում /մայիս/:
13. «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» հասարակական-քաղաքական գլոբալ ֆորումի նախապատրաստական աշխատանքներին մասնակցություն /ապրիլ/:
14. Կոլեկտիվի անդամների այցելություն Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Ծիծեռնակաբերդի հուշահամալիր: Համալսարանի ներկայացուցիչները մասնակցել են նաև արդեն ավանդական դարձած Ջահերով երթին /ապրիլ/:
15. «Հայոց ցեղասպանության 100-ամյակը. ես հիշում եմ... ես դատապարտում եմ... ես պահանջում եմ» վերնագրով տեսահոլովակի պատրաստում /ապրիլ/:
16. Հայոց ցեղասպանությանը նվիրված ֆիլմերի ցուցադրություն /»Մայրիկ», «Մուսա լեռան 40 օրը», «Արտույտների ագարակը», «Արևմտահայաստանի մշակութային արժեքները», «Նախիջևան. կորուսյալ հայրենիք և այլն/:

7. ԵՊԼՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2015թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԵՊԼՀ ուսանողական խորհուրդը 2015 թվականին իրականացրել է ծրագրեր հետևյալ հիմնական ուղղություններով՝ **ուսումնագիտական, բարեգործական, մշակութային, ժամանցային և սպորտային:**

ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ

19.02.2015 - “Effective CV writing AND Job applications” թեմայով սեմինար, որը վարեց Հասմիկ Ղալեչյանը:

20.02.2015 - Հանդիպում «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» խաղի «Սերունդներ» գիտակների թիմի ղեկավար Արման Աբովյանի հետ՝ «Ի՞նչ ամփոփում է իր մեջ «ինտելեկտ» եզրույթը» թեմայով:

27.02.2015 - Տեսահոլովակների մրցույթ-շնորհանդես՝ նվիրված մայրենի լեզվի օրվան հայագիտության աբիոնի բ.գ.թ., ավագ դասախոս Գոհար Վարդանյանի հետ համատեղ:

02.03.2015 – “Word Game” խաղ-մրցույթ անգլերեն լեզվով:

06.03.2015 - “American Culure” թեմայով սեմինար Ամերիկյան անկյունի կամավոր Էլլի Վուլֆի հետ:

15-20.03.2015 - «Ժառանգն եմ ես 1.500.000 հայի» թեմայով շարադրությունների մրցույթ՝ ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի աջակցությամբ:

16-18.03.2015 - «Քաղաքացիական երկխոսություն և գործնական քայլեր հանուն փոփոխության» միջհամալսարանական մրցույթ՝ Ջինիշյան հիշատակի հիմնադրամի հետ համատեղ:

25.03.2015 - «Լեզվական թեստերի և քննությունների համապատասխանեցումը լեզուների իմացության համաեվրոպական համակարգի մակարդակներին» թեմայով սեմինար Եվրոպայի խորհրդի Ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնի հետ:

03.04.2015 - «Երիտասարդություն և առողջ ապրելակերպ» խորագրով սեմինար ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Արսեն Քարամյանի հետ:

24.04.2015 - Ցեղասպանությանը 100-րդ տարելիցին նվիրված հոգվածի տպագրում Կոլումբիայի “EL ESPECTADOR” թերթում:

03.05.2015 - «Գարեգին Նժդեհ: Ցեղակրոնություն և պահպանողականություն» թեմայով սեմինար:

10.05.2015 - «Պատերազմից մոխրացած նամակներ» խորագրով մրցույթ:

15.05.2015 - «Ֆիզդաստիարակություն» թեմայով դաս-գեկուցում ֆիզդաստիարակության ամբիոնի հետ:

19.05.2015 - «Հայաստանի բուսաբանական և կենդանական աշխարհը» թեմայով սեմինար Երիտասարդ կենսաբանների ասոցիացիայի հետ համատեղ:

27.05.2015 - «Ճիշտ սննդակարգ առողջ և գեղեցիկ մաշկ ունենալու համար» թեմայով սեմինար:

17.06.2015 - «ՀՀ անվտանգության խնդիրները» խորագրով սեմինար ՀՀ ՊՆ խորհրդական Դավիթ Ջամալյանի հետ:

02.09.2015 - «Հիշել, ապրել, արարել» խորագրով միջոցառում՝ նվիրված ցեղասպանության տարիներին կրթության և մշակույթի երախտավորների հիշատակին:

30.09.2015 - Բաց սեմինար՝ նվիրված «բանավեճ» հասկացությանն ու դրա կառուցվածքին ՋՀՀ-ի «Քաղաքացիական երկխոսություն և գործնական քայլեր՝ հանուն փոփոխության» ծրագրի ղեկավար Գայանե Աղայանի հետ:

16.10.2015 - «Հայաստան - ԵՄ կապեր» թեմայով սեմինար-հանդիպում Ռիչարդ Չարնեցկու հետ:

13.11.2015 – Սեմինար-միջոցառում՝ նվիրված բարության միջազգային օրվան:

17.11.2015 - Սեմինար «Ի՞նչ է թրաֆիքինգը: Թրաֆիքինգը Հայաստանում» թեմայով:

Տարվա ընթացքում ԵՊԼՀ ՈԻԽ արտաքին կապերի հանձնաժողովը կազմակերպեց մի շարք հանդիպումներ տարբեր միջազգային երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչներ հետ՝ "AISEC", "FYCA", "HUI", "APY":

Տարվա ընթացքում ԵՊԼՀ ՈԻԽ ուսումնագիտական հանձնաժողովը կազմակերպեց հանդիպումներ ավագների խորհրդի հետ՝ փորձելով վեր հանել ուսանողներին հուզող հարցերն ու խնդիրները:

Տարվա ընթացքում ԵՊԼՀ ուսանողների համար անցկացվեցին միջբուհական բազմակեզու ինտելեկտուալ խաղեր՝ ՄՀ, ՕԼ, ՌՕԼ ֆակուլտետների միջև:

Տարվա ընթացքում ԵՊԼՀ ուսանողները կազմակերպեցին և իրականացրին մի շարք բանավեճեր և քննարկումներ ուսանողներին հուզող հարցերի շուրջ:

Տարվա ընթացքում ԵՊԼՀ ՌԻԽ գրքամուկ ակումբը կազմակերպեց մի շարք գրքերի քննարկումներ, հանդիպումներ գրողների հետ:

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

15.01-10.02.2015 – 150-ից ավելի գրքերի հավաքագրում և հանձնում Այգեպարի սահմանին ապրող երեխաներին:

12.02.2015 – Այց Նոր Նորքի թիվ 2 հատուկ դպրոց:

02.03.2015 – Այց N¹ տուն – ինտերնատ:

03.03.2015 – ՀԵՀ-ի կողմից հայտարարված կրթաթոշակի մրցույթի շրջանակներում ուսման վարձի փոխհատուցում ստացան ԵՊԼՀ 47 ուսանողներ:

25.03.2015 – Քաղցրավենիքի հանձնում Ռ.Հ. Յոլյան անվան արյունաբանական կենտրոնի հիվանդ երեխաներին:

27.03.2015 – Բարեգործական ֆուտբոլային խաղ ԵՊԼՀ և ՀԱՀ համալսարանների ֆուտբոլի թիմերի միջև Դինամո մարզադաշտում:

05.04.2015 – Դրամահավաք Էլենի ընտանիքի համար: Վերջինս տառապում է շատ հազվադեպ հանդիպող ցիստինոզ հիվանդությամբ /50 000դր/:

09.05.2015 - Դրամահավաք կոպիտ հենաշարժողական ֆունկցիայի խախտում /դիսկինեզիա/ հիվանդությամբ տառապող Վաղարշակ Ղևոնդյանին օգնելու համար (280 000 դրամ):

28.05.2015 – Մանկական ներկայացում Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում 11 անապահով ընտանիքների 30-ից ավելի երեխաների համար:

29.05.2015 – Անվճար հյուրասիրություն, խաղեր, նվերներ և անակնակալներ սոցիալապես անապահով վիճակում գտնվող երեխաների համար «ՄԵՐ ԱՅԳԻՆ» ռեստորանում:

10.10.2015 – Բարեգործական այց ՀՕՖ (հայ օգնության ֆոդ):

25.10-03.11.2015 - Դրամահավաք Էդմոնդի համար, ում մոտ բժիշկներն աշխտորոշել էին մանկական ուղեղային կաթված /80 000/:

05-11.11.2015 - Դրամահավաք Սլավա Սարգսյանի համար, ով 3-րդ կարգի հաշմանդամ է և կարիք ունի բազում դեղերի /50 000/:

13.11.2015 – Բարության միջազգային օրվա նշում ինչպես համալսարանում, այնպես էլ համալսարանից դուրս:

13-20.11.2015 - Դրամահավաք վեցամյան Լուիզայի համար, ում մոտ լիարդի ցեռոզ էր ախտորոշվել /160 000դր/:

13-30.11.2015 – «Մեկ բացիկ = մեկ բնակարան 3» ծրագրի շրջանակներում ուսխորհրդականները վաճառեցին 400դրամ սիմվոլիկ արժեք ունեցող 165 բացիկ:

05.12.2015 – Այց Կառլեին: Կառլենն անապահով ընտանիքի գավակ է և տառապում է հաշմանդամությամբ, վիտամինների կարիք ունի: Կատարվեց այց, տանելով հագուստ, խաղալիք, կաթնամթերք և քաղցրավենիք
(<https://www.youtube.com/watch?v=7M7MVRhXyes>):

16.12.2015 – Օգնություն Հոկտեմբերյանում ապրող մի ընտանիքի: Այս ընտանիքը ապրում էր գոմում: Voya ստուդիոյի միջոցով հավաքագրած սնունդը ր հագուստը ուղարկվեց նրանց (<https://www.youtube.com/watch?v=iUFVW3l3Suo>)

17.12.2015 – Ամանորյա անակնկալ ԵՊԼՀ ՈւԽ-ի ողջ նախագահական անձնակազմին յուրօրինակ ձևով շնորհավորեցինք գալիք Ամանորն ու Սուրբ ծնունդը:

19.12.2015 – Տան հանձնում Գյումրիում 1 բացիկ=1 բնակարան ծրագրից ստացված հասույթով գնվել էր բնակարան և մենք մասնակից դարձանք այդ արարողությանը:

25.12.2015 – Ձմեռ պապիկ: Պառավաքար գյուղումա պրում է ավելի քան 50 երեխա: ԵՊԼՀ ՈւԽ բարեգործական հանձնաժողովի անդամները դարձան Ձմեռ պապ և գնեցին նվերներ երեխաների համար:

26.12.2015 – Ամանորյա այց ՀՕՖ: Այց Հայ օգնության ֆոնդ՝ տանելով ամանորյա նվերներ և ներկայացման տոմսեր: Կար հատուկ ամանորյա ծրագիր (երգեր, խաղեր, ինտելեկտուալ խաղ)

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

16.02.2015 - «Մերը կնոջ պոեզիայում» միջոցառում:

19.02.2015 - Մ. Լեւոնյանի 200 ամյակին և ստեղծագործությանը նվիրված ցերեկույթ:

24.02.2015 - «Ես և Դու» խորագիրը կրող միջոցառումը՝ նվիրված սիրահարների տոնին:

04.03.2015 – Բուլղարական «Մարտենիցա» տոնի նշումը ԵՊԼՀ-ում:

08.03.2015 – Մարտի 8-ը ԵՊԼՀ-ում և ԵՊԼՀ-ից դուրս:

20.03.2015 - Ասմունքի մրցույթ նվիրված ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՄԻԱՄՍՅԱԿԻՆ:

03.04.2015 - Միջոցառում նվիրված Անդրանիկ Օզանյանի 150 ամյակին:

20.04.2015 – Միջոցառում նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին:

04.05.2015 – Հանդիպում «Եվրատեսիլ 2015» երգի ամենամյա մրցույթում Հայաստանը ներկայացնող GENEALOGY խմբի անդամների հետ:

12.05.2015 - Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 70 ամյակին նվիրված միջոցառում:

25.05.2015 - «Շնորհալիները» խորագրով միջոցառում:

25.06.2015 - 2014-2015 ուս. տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի դիպլոմների հանձման հանդիսավոր արարողությունը:

25.09.2015 - Եվրոպական լեզուների օրվան նվիրված միջոցառում Եվրոխորհրդի ծրագրերի իրականացման խորհուրդի հետ համատեղ:

27.11.2015 - «ԵՊԼՀ լավագույն ուսանող 2015» մրցանակաբաշխության:

08.12.2015 - «Շնորհալիները» խորագրով միջոցառում:

Տարվա ընթացքում ԵՊԼՀ ՈԻԽ-ն նկարահանել է մի շարք տեսահոլովակներ՝ «Տոնո շնորհավոր, Հայոց բանակ», «Չկա գիրք՝ չկա շքեղություն», «Հիշել, դատապարտել, պահանջել», «Մի՛ մոռացեք՝ Ձեզ տանը սպասում են», «Իմ զինակիցը կոչում. ես եմ, ես ամենից առաջ...», «Էրեբունի-Երևան 2797» և այլն:

Տարվա ընթացքում ԵՊԼՀ ՈԻԽ-ն կազմակերպել է թե՛ ներբուհական, թե՛ միջբուհական մի շարք ֆոտոմրցույթներ՝ «Հայոց ցեղասպանությունն իմ աչքերով», «ՕԼՖ-ն իմ աչքերով», «Ցեղասպանությունն իմ աչքերով», «Մելֆի դասախոսիս հետ», «Իմ ջերմ ու բարի քաղաք» և այլն:

ԺԱՄԱՆՑԱՅԻՆ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ

23.03.2015 – Վոլեյբոլի խաղ ԵՊԼՀ և ՖԿՀՊԻ աղջիկների միջև:

01.04.2015 – Պարային Master Class Dance City Studio-ի պարուսույց Վարդգես Սողոմոնյանի հետ:

03.04.2015 – “STREET WORKOUT ARMENIA” թիմի մարզային շոու-բեմադրություն ԵՊԼՀ բակում:

29.09.2015 - «+Դուբլ 5» ներբուհական խաղ:

15.12.2015 - «+Դուբլ 5» միջբուհական խաղ:

04.11-10.12.2015 - «ՍԵԼՖԻ ԴԱՍԱԽՈՍԻՍ ՀԵՏ» ներբուհական ֆոտոմրցույթ:

Տարվա ընթացքում կազմակերպվեցին ԵՊԼՀ ուսանողների այցելություններ Վ. Բրյուսովի, Ա. Օզանյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Չարենցի, Մ. Սարյանի, Հ. Թումանյանի, Պ. Սևակի, Կոմիտասի, Ցեղասպանության թանգարաններ: ԵՊԼՀ ուսանողները մասնակցեցին նաև թանգարանային գիշերներին:

Տարվա ընթացքում ԵՊԼՀ ուսանողների համար կազմակերպվեցին ճանաչողական այցեր դեպի Հայաստանի պատմամշակութային վայրեր՝ Գառնի, Գեղարդ, Չարենցի կամար, Էջմիածին, Խոր-Վիրապ, Ծաղկաձոր, Գյումրի Սաղմոսավանք, Հովհանավանք, Օշական, Կարմրավոր, Ծիրանավոր, Սպիտակավոր:

Տարվա ընթացքում ԵՊԼՀ 250 ակտիվ ուսանողներ անվճար հանգստացան Ծաղկաձորում:

Տարվա ընթացքում կազմակերպվեցին նաև մի շարք տարբեր լեզուներով ուսուցողական ֆիլմերի դիտումներ և քննարկումներ ԵՊԼՀ ուսանողների համար:

Տարվա ընթացքում ԵՊԼՀ ՈԻԽ սպորտի հանձնաժողովը ֆիզդաստիարակության ամբիոնի աջակցությամբ անցկացրեց վոլեյբոլի և ֆուտբոլի խաղեր:

ԵՊԼՀ ՈԻԽ ֆուտբոլի թիմը մասնակցեց նաև պատգամավորների հետ ֆուտբոլային խաղին:

ԵՊԼՀ վոլեյբոլի թիմը մասնակցեց վոլեյբոլի ուսանողական միջբուհական առաջնությանը:

Անցկացվեցին նաև շախմատի, սեղանի թենիսի, փոխանցումավազքի, լողի ուսանողական ընթացիկ մրցումներ:

**ԵՊԼՀ ուսանողական խորհուրդն ակտիվորեն մասնակցել է նաև միջբուհական և
համապետական տարբեր ծրագրերի՝**

02.03.2015 - Մասնակցություն «Հայ ասպետ» բուհական հեռուստամրցաշարին՝ զբաղեցնելով 2-րդ հորիզոնականը:

07.02.2015 – Մասնակցություն «Ես ուսանող եմ» լուսանկարների միագգային մրցույթին՝ «Գեղարվեստական արժեքի համար» անվանակարգում զբաղեցնելով առաջին, իսկ «Հումորի համար» անվանակարգում՝ 3-րդ տեղերը:

19.02.2015 - Մասնակցություն Բարեկանդանի տոնակատարության /15 ուսանող/:

04.03.2015 - Մասնակցություն «Հայկյան 2014» մրցանակաբաշխությանը՝ ճանաչվելով հաղթող լավագույն ուսանողական խորհուրդ անվանակարգում:

07.03.2015 - «Երբ բանավիճում են երիտասարդները» մրցաշարին կազմակերպված քաղաքապետարանի կողմից՝ գրավելով առաջին տեղը:

11.03.2015 – Մասնակցություն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների 16-րդ հանրապետական մարզական խաղերի ԿՐՈՍԱՎԱԶՔԻ առաջնությունում՝ գրավելով 2-րդ տեղը:

21.03.2015 - Մասնակցություն սեղանի թենիսի միջհամալսարանական առաջնությանը՝ գրավելով 3-րդ հորիզոնականը:

27.03.2015 - Մասնակցություն “Главные песни России” մրցույթ-փառատոնին՝ նվիրված Հայրենական Մեծ պատերազմի 70 ամյակին:

01-25.04.2015 - Մասնակցություն «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» հասարակական–քաղաքական գլոբալ ֆորումի կազմակերպչական աշխատանքներին /95 ուսանող/:

11.04.2015, 14.11.2015 - ԵՊԼՀ ուսանողները մասնակցեցին նաև համաքաղաքային շաբաթօրյակների /80 ուսանող/:

23.04.2015 – Մասնակցություն “LOGOS EXPO 2015” ամենամյա ցուցահանդես-մրցույթին:

24.04.2015 – Մասնակցություն Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված ծրագրին /164 ուսանող/:

14.05.2015 - Մասնակցություն «Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի նախարարական գագաթնաժողովի և բոլոնիայի քաղաքականության» չորրորդ ֆորումի կազմակերպչական և թարգմանչական աշխատանքներին /50 ուսանող/:

27.05.2015 - Մասնակցություն միջբուհական «Նոենի» ուսանողական երգի մրցույթ-փառատոնին:

05.06.2015 – Մասնակցություն “Ky6ox PAY” 2015-2016թ-ի ուսանողական Գրան-Պրիի խաղին՝ գրավելով 3-րդ տեղը:

20.06-16.08.2015 – Մասնակցություն Հանքավանում և Ծաղկաձորում անցկացվող ամառային ճամբարներին /77 ուսանող/:

22-24.07.2015 - Մասնակցություն «Թռչկան-2015» միջհամալսարանական ինտելեկտուալ վրանային արշավ մրցույթ-փառատոնին:

02-13.08.2015 – Մասնակցություն ՀՀ-ում տեղի ունեցող համահայկական 6-րդ ամառային խաղերին /87 ուսանող/:

17-23.08.2014 – Մասնակցություն «Բազե 2015» համահայկական երիտասարդական հավաքին:

01-08.10.2015 – Մասնակցություն “High Fest 2015” միջազգային թատերական փառատոնին /65 ուսանող/:

03.10.2015 - Մասնակցություն Երևանի վազքի միջազգային առաջին կիսամարաթոնին /45 ուսանող/:

11.10.2014 – Մասնակցություն «Էրեբունի-Երևան-2797» տոնակատարությանը /500 ուսանող/:

25.10.2015 - Մասնակցություն Առնո Բաբաջանյան փոքր համերգասրահում կայացած բարեգործական միջոցառմանը:

ԵՊԼՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՆԱԵՎ ՄԻ ՇԱՐՔ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ

01.10.2013-01.01.09.2015, Ստոնիֆորդ, Իռլանդիա, Եվրոպական Կամավորական ծրագիր
- Ռիմա Հարությունյան (ՕԼՖ, 4-րդ կուրս)

14.05.2015-21.05.2015, Վիբո Վալենտիա, Իտալիա, Միջազգային սեմինար - Ժենյա Տեր-Վարդանյան (ասպիրանտ)

26.06.2015 – 04.07.2015, Օմմեն, Հոլանդիա, Միջազգային սեմինար – Մարինե Համբարձումյան (ՕԼՖ, 4-րդ կուրս)

05-10.07.2015, Բեռն, Շվեյցարիա, Ֆրանկոֆոն երիտասարդական խորհրդարանի 7-րդ վեհաժողով – Լուսինե Նալբանդյան (ԹՄՀՖ, 4-րդ կուրս)

07.07. 2014 – 08.08.2014, Կիել, Գերմանիա, Կամավորական Աշխատանքային ճամբար - Մարինե Համբարձումյան (ՕԼՖ, 4-րդ կուրս)

08.07.2015 – 29.07.2015, Նոադի Լե Գրան, Ֆրանսիա, Կամավորական Աշխատանքային ճամբար - Տաթև Սարգսյան, Տաթև Սևոյան (ԹՄՀ, 4-րդ կուրս)

11.08.2015-25.08.2015, Տերխովա, Սլովակիա, Ամառային ճամբար – Ռիմա Հարությունյան (ՕԼՖ, 4-րդ կուրս)

19.08.2015 – 25.08.2015, Ռազանա, Լատվիա, Միջազգային սեմինար - Մարինե Համբարձումյան (ՕԼՖ, 4-րդ կուրս)

05.09.2015 – 15.09.2015, Անտվերպեն, Բրյուսել, Բելգիա, Երիտասարդական Փոխանակման ծրագիր - Մարինե Համբարձումյան (ՕԼՖ, 4-րդ կուրս)

15.09.2015 – 15.02.2016, Լոն, Լեհաստան, Փոխանակման ծրագիր - Դիանա Պողոսյան (ԹՄՀ, 4-րդ կուրս)

13.10.2014-13.05.2015, Վալդանյո, Իտալիա, Եվրոպական կամավորական ծրագիր - Լորենտա Պետրոսյան (մագ., 1ին կուրս)

01.11.2015 – 09.11.2015, Թուրին, Իտալիա, Երիտասարդական Փոխանակման ծրագիր - Լիանա Հակոբյան, Լիլիթ Գևորգյան (ԹՄՀ, 4-րդ կուրս)

8. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում՝

1. Ավարտվել է ուսումնական մասնաշենքի 2-րդ հարկում 40 քառ. մետր մակերեսով Չինարենի թարգմանչական լաբարատորիայի հիմնավոր վերանորոգումը:

Վերանորոգման ընթացքում կատարվել են պատերի հարդարման աշխատանքներ, տեղադրվել են կախովի առաստաղներ, փոխվել են ջեռուցման համակարգի խողովակները և մարտկոցները, անցկացվել են նոր էլ. հոսանքի լարեր՝ իրենց անջատիչներով և վարդակներով, հատակները ծածկվել են լամինատով, տեղադրվել են նոր լուսատու լուսնիսցիտային լամպեր: Սենյակն ապահովված է նաև անվտանգության սարքերով:

2. Գրադարանի մասնաշենքի առաջին մուտքի 2-րդ հարկում տեղադրվել է 12 քառ. մետր մակերեսով այլումինե սպիտակ պրոֆիլներով լամինապատ միջնորում, 38 քառ. մետր մակերեսով ավելացվել է կորեերենի և կորեական մշակույթի կենտրոնի տարածքը, որը նպաստել է կենտրոնի աշխատանքային պայմանների բարելավմանը:

3. Համալսարանի աշխատակիցների ուժերով մասնակի վերանորոգվել է ուսումնական մասնաշենքի մարզադահլիճը:

4. Շինարարական կազմակերպության հետ կնքված համաձայնագրի արդյունքում 2013 թվականի հոկտեմբեր ամսից համալսարանի Թումանյան 42 հասցեի 1-ին և 2-րդ ուսումնավարչական մասնաշենքերի տանիքի վրա մանսարդային հարկի (1850 քառ. մետր մակերեսով) կառուցման աշխատանքները դադարեցվել էին մինչև 2015 թվականի հոկտեմբեր ամիսը:

2015 թվականի հոկտեմբերի 1-ից՝ ըստ համաձայնագրի, վերսկսվել են 2-րդ մասնաշենքի մանսարդային հարկի շինարարական աշխատանքները:

ա) Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է մետաղական կարկասի ողջ մոնտաժումը, հատակների երկաթ բետոնյա սալերի և հեծանների բետոնացումը, տանիքի ալիքավոր ցինկապատ թիթեղի մոնտաժումը:

բ) Վերանորոգվել են կաթսայատան G 350 մակնիշի կաթսայի մարտկոցները:

գ) Ավարտին են մոտենում արտաքին պատերի կառուցումը, եվրոպատուհանների տեղադրումը, արտաքին պատերի հարդարումը և տանիքի ջերմամեկուսացումը, որոնք կավարտվեն 2016 թվականի զարնանը:

9. 2016 թ. ԱՆԵԼԻՔՆԵՐ

- ✓ ԵՊԼՀ ձեռնարկությունների հետ համագործակցությունը ապահովող մշտական հանձնաժողովի ստեղծում: Հանձնաժողովի կազմում ԵՊԼՀ ներկայացուցիչներից բացի կընդգրկվեն նաև մի շարք գործատու կազմակերպությունների ներկայացուցիչներ:
- ✓ ԵՊԼՀ բոլոր տարակարգերի աշխատակիցների համար պաշտոնների անձնագրերի մշակում:
- ✓ Ներհաամալսարնական կարգերի վերամշակման հանձնաժողովի կողմից նոր փաստաթղթերի մշակում՝
 - «ԵՊԼՀ Ուսանողների գիտելիքների գնահատման» կանոնակարգ,
 - «Ուսանողների պրակտիկայի անցկացման» կանոնակարգի վերախմբագրում,
 - Ռեկտորատի կանոնակարգ:
 - Մշակել և ներդնել նոր կրթական ծրագիր «Հայերենը որպես օտար լեզու» հաշվի առնելով արտասահմանյան գործընկեր համալսարաններում արդեն իսկ բացված հայագիտության կենտրոնների զարգացումը և նոր հայագիտության կենտրոնների բացման միտումը:
 - ERASMUS, ERASMUS + և երկկողմանի այլ միջբուհական ծրագրերով ընդլայնել համագործակցությունը թվով ավելի շատ ուսանողների և ՊԴ կազմի ներկայացուցիչներին ընդգրկելու՝ շարժունությունը ապահովելու նպատակով:
 - Ընդլայնել կապերն արտասահմանյան համալսարանների և կառույցների հետ՝ կնքելով նոր պայմանագրեր՝ համաձայն ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի:
 - Ընդլայնել դրամաշնորհային ծրագրերը՝ ուսանողների և ՊԴ կազմի շարժունությունը խթանելու նպատակով:
 - Մշակել և ներդնել նոր ծրագրեր՝ ուղղված կրկնակի և համատեղ դիպլոմների շնորհմանը:
- ✓ 2016 թ. ԵՊԼՀ-ն նախատեսում է խորացնել արդեն իսկ գոյություն ունեցող կապերը գործընկեր համալսարանների և կառույցների հետ:

- ✓ Կնքել նոր պայմանագրեր և համաձայնագրեր ռազմավարական ծրագրում սահմանված ուղղություններից բխող մի շարք արտասահմանյան համալսարանների հետ (Եվրոպական, ԱՊՀ, ասիական, ամերիկյան):
- ✓ Իրականացնել նոր փոխանակման ծրագրեր այն համալսարանների հետ, որոնց հետ կնքվել են համագործակցության պայմանագրեր, տանել աշխատանքներ՝ ուղղված կրկնակի և համատեղ դիպլոմների շնորհմանը:
- ✓ Ձևավորել ցանցային միջավայր հեղինակավոր միջազգային գիտահետազոտական և կրթական կենտրոնների հետ, կազմակերպել համատեղ միջազգային միջոցառումներ:
- ✓ Մագիստրոսական ավարտական թեզերի գիտահետազոտական բաղադրիչի համապատասխանեցում համալսարանի ՄԿԾ-ներին
- ✓ Հետբուհական կրթական ծրագրերի և ուսումնական պլանների վերանայում
- ✓ Հետբուհական կրթություն ստացողների շրջանում խնդիրների վերհանում և վերլուծություն՝ հետբուհական կրթության որակի բարձրացման նպատակով

10. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ